2020 թ. մարտի 31-ին Արցախում տեղի կունենան Արցախի Հանրապետության նախագահի եւ Արցախի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններ

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285) 5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1000, գինը՝ 100 դրամ:

ISSN 1829-3468

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 26 ՄԱՐՏԻ 2020Թ.
№ 6 (522)

# Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

*Սփոփա՛նք փուր իմ*
*փխրություններին,*
*փանջանքիս անդորր,*
*Վիշտիս փարափի՛ր,*
*փվայփանքներիս*
*խաղաղություն բեր,*
*Լացիս՝ ամոքում,*
*հեծեծանքերիս՝*
*ապաքինություն,*
*Ողբ ու կականիս՝ դադար*
*ու հանգիստ:*

**ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ, ՄԱՏՅԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ, ԲԱՆ ՁԳ, Բ**



# Կորոնավիրուս. կյանքը շարունակվում է փորձության այս օրերին

## Վարչապետ Նիկոլ Փաշինյանն ուղերձով դիմել է ժողովրդին

**Սիրելի հայրենակիցներ,**
**Հայաստանի Հանրապետության հպարտ քաղաքացիներ,**

Հայաստանը, հայ ժողովուրդը, ինչպես ամբողջ մարդկությունը դժվար օրեր են ապրում:

Նոր կորոնավիրուսի համաճարակը ոչ միայն շարունակում է տարածվել աշխարհում, այլեւ՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության համաձայն՝ նոր թափ է հավաքում:

Աշխարհում ավելի քան 350 հազար կորոնավիրուսի հաստատված դեպք կա, ավելի քան 16 հազար մարդ մահացել է վարակից:

Ի՞նչ գիտենք մենք կորոնավիրուսի մասին: Դա մի վարակ է, որն արագորեն, մարդուց անցնում է մարդուն օդակաթիլային եղանակով, ախտահարում է մարդու շնչառական համակարգը, արտահայտվում է չոր եւ տեւական հազով, շնչարգելությամբ, որն ուղեկցվում է ջերմությամբ եւ հասնում ընդհուպ ծայրահեղ ծանրության թոքաբորբի:

Համաշխարհային եւ հայաստանյան փորձը, սակայն, ցույց տվեց, որ կորոնավիրուսով հիվանդը կարող է չունենալ ոչ մի ախտանշան: Այսինքն՝ մարդը կարող է վարակված լինել, բայց չհազալ, շնչառական խնդիրներ ու ջերմություն չունենալ: Նման դեպքերում, մեծ հավանականությամբ՝ մարդը չի էլ կռահի, որ վարակակիր է եւ կբուժվի առանց որեւէ միջամտության, եւ հետեւաբար՝ հիվանդությունը որեւէ վտանգ չի ներկայացնի նրա համար:

Խնդիրն այն է, սակայն, որ այս ընթացքում նա կարող է վարակել բազմաթիվ ընկերների, հարազատների, ընտանիքի անդամների: Նրանցից շատերի համար նույնպես հիվանդությունը լուրջ վտանգ չի ներկայացնի. համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ վիրուսը հիմնականում անվտանգ է երեխաների, երիտասարդների համար եւ նրա հիմնական զոհը դառնում են 70-ից բարձր տարիք ունեցող անձինք, ինչպես նաեւ խրոնիկ հիվանդություն ունեցողները:

Եվ հետեւաբար, հիմնական խնդիրը մեր վատառողջ հայրենակիցներին, մեր ծնողներին, տատիկներին եւ պապիկներին պաշտպանելն է, հնարավոր ամեն ինչ անելը, որ նրանք խուսափեն վարակից: Իհարկե, վարակվելու փաստն ինքնին, դատավճիռ չէ. աշխարհում ավելի քան 100 հազար մարդ հաջողությամբ բուժվել է կորոնավիրուսից, այդ թվում՝ 70-անց մարդիկ, արձանագրվել է նույնիսկ 95-ամյա պացիենտի բուժման դեպք, բայց յուրաքանչյուր կյանքն անգին է եւ մենք պետք է ամեն ինչ անենք մահվան ելքով դեպքերից խուսափելու համար:

Հենց սրան են ուղղված եղել մեր բոլոր գործողությունները հենց ամենասկզբից: Մենք դպրոցներում եւ այլ ուսումնական հաստատություններում ուսումնական պրոցեսը դադարեցրեցինք ոչ միայն երեխաներին վարակից պաշտպանելու, այլեւ նրանց միջոցով վարակի տարածումը թույլ չտալու համար: Այս նպատակն ունեն նաեւ հետագայում կիրառված ավելի խիստ սահմանափակումները: Եվ մեր խնդիրը ոչ միայն վարակի հետագա տարածումը թույլ չտալն է, այլեւ մեր առավել խոցելի խմբերին պաշտպանելը եւ առողջապահական համակարգի անտանելի գերբեռնվածությունը կանխելը:

**Սիրելի հայրենակիցներ,**

այսօրվա ժամը 18.00-ի դրությամբ մեր վիճակագրությունը հետեւյալն է. մենք ունենք կորոնավիրուսի հաստատված 249 պացիենտ, որոնց մեծ մասը գտնվում է Երեւանի «Նորք» ինֆեկցիոն հիվանդանոցում, մյուսները հանրապետության այլ բուժհաստատություններում:

Նրանց մի մասն այս պահին նույնիսկ ջերմություն չունի, ինչը հույս է ներշնչում, որ շատերը կբուժվեն նույնիսկ առանց որեւէ բժշկական միջամտության եւ նրանց այս պահին հիվանդանոցում գտնվելու հիմնական իմաստն այն է, որ չվարակեն ուրիշ քաղաքացիների:

էջ 2

## Հեռավար ուսուցումը՝ ժամանակի պահանջ

Վերջին օրերին ամենաակտիվ քննարկվող թեման համարվում է հեռավար ուսուցումը համացանցի միջոցով՝ պայմանավորված աշխարհում տեղի ունեցող իրադարձություններով: Կորոնավիրուսի համավարակի կանխարգելման նպատակով դադարեցվել են ուսումնական հաստատությունների աշխատանքները: Ստեղծված իրավիճակում կրթության անընդհատությունն ապահովելու նպատակով ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից առաջարկվել է կազմակերպել հեռավար ուսուցում: Ուսումնական հաստատությունները դրական են արձագանքել առաջարկին եւ սկսել իրականացնել հեռավար ուսուցման ծրագրեր: Սոցիալական կայքերում տեսնում ենք մեծ ոգեւորություն, ուսուցիչները փորձում են կիրառել հեռավար կրթության տարբեր գործիքներ՝ սոցիալական մեդիա հարթակներ, տեսակապեր եւ այլն: Մանկավարժական հանրությունը գիտակցում է հեռավար ուսուցման անհրաժեշտությունը եւ կարեւորությունը նման իրավիճակում: Դրական է բոլոր շահագրգիռ կողմերի ակտիվությունը, փոխօգնության, փորձի փոխանակման պատրաստակամությունը: Տեսանելի է սովորողների ոգեւորությունն այն առումով, որ իրենք ավելին գիտեն հեռահաղորդակցության միջոցների մասին, քան դասավանդողները, նման իրավիճակում փոխվել են սովորողի եւ դասավանդողի դերերը: Հետեւաբար, մտավախություն չունեմ, որ ուսուցիչների մի մասի՝ տեխնոլոգիաներին չտիրապետելը կարող է խոչընդոտ հանդիսանալ:

Չկա հեռավար ուսուցման էության միասնական ըմբռնում: Կրթական հաստատությունը, դասավանդողը՝ հաշվի առնելով առարկայի առանձնահատկությունները եւ առկա միջոցները, իրավունք ունեն որոշել, թե ինչ կրթական տեխնոլոգիաներ կիրառել: Սակայն այս դեպքում առկա է էլեկտրոնային ռեսուրսների ոչ համակարգված, էպիզոդիկ կիրառում՝ պահի հնարավորությամբ պայմանավորված:

Բացակայում է կրթական քաղաքականությունը՝ դասագրքերին կից էլեկտրոնային ռեսուրսների կիրարկման անհրաժեշտության պահանջի եւ դրան համապատասխան առաջարկի իրականացման գործընթացի տեսքով:

Արտակարգ դրության ավարտից հետո միայն յուրաքանչյուր ուսումնական հաստատություն կկարողանա գնահատել կազմակերպված հեռավար ուսուցման արդյունավետությունը, կատարած աշխատանքի ծավալը, լրացուցիչ դասերի անհրաժեշտությունը:

Ի՞նչ է հեռավար ուսուցումը:

Հեռավար ուսուցումը տեղեկատվական տեխնոլոգիաների եւ հեռահաղորդակցության միջոցներով համակարգված ուսուցման ձեւ է:

Հեռավար եւ առկա ուսուցման նպատակները նույնն են, եթե ուսուցումը հիմնված է նույն բովանդակությունն ունեցող համապատասխան կրթական ծրագրերի վրա: Սակայն այլ են նյութի մատուցման ձեւը, փոխներգործությունը դասավանդողի եւ սովորողի, ինչպես նաեւ տարբեր սովորողների միջեւ: Այլ են նաեւ հեռավար ուսուցման կազմակերպման

էջ 3

**Սյունիքի մարզում նույնպես ունենք կորոնավիրուսի դեպք:**

# Վարչապետ Նիկոլ Փաշինյանն ուղերձով դիմել է ժողովրդին

էջ 1 Մեր վարակակիր հայրենակիցների շրջանում 65-ից բարձր տարիքի 11 անձ կա, 70-ից բարձր տարիքի 5 անձ: 80-ից բարձր պացիենտ այս պահին բարեբախտաբար չունենք: Ընդհանուր առմամբ թոքաբորբ տանող 30 հիվանդ ունենք, նրանցից 5-ը գտնվում են ինտենսիվ թերապիայի բաժանմունքում եւ դժբախտաբար նրանցից մեկի՝ 77-ամյա մեր հայրենակցի վիճակը ծայրահեղ ծանր է: 4-ի վիճակը բժիշկները գնահատում են ծանր:

Այս պահի դրությամբ ունենք 868 մեկուսացված քաղաքացիներ, ավելի քան 2419 քաղաքացու համար սահմանվել է ինքնամեկուսացում տներում եւ հույս ունեմ՝ նրանք բոլորը ճշգրտորեն կպահպանեն մեկուսացման պայմանները:

Ինչ վերաբերվում է վարակի տարածման աշխարհագրությանը, այս պահի դրությամբ կորոնավիրուսի դեպքեր ունենք մայրաքաղաք Երեւանում, Արմավիրի, Արարատի, Արագածոտնի, Կոտայքի, Սյունիքի, Շիրակի եւ Լոռու մարզերում:

Այս դեպքերի մեծ մասի ծագումնաբանությունը մեզ հայտնի է: Ինչպես ասել ենք նախկինում, կորոնավիրուսի տարածման երեք զարգացող ճյուղ ենք ունեցել. Իրանից ժամանած մեր հայրենակիցները, Էջմիածնի մեր հայրենակիցները եւ Երեւանի արտադրամասի մեր հայրենակիցները:

Ըստ էության մեր գործողությունների արդյունքում հաջողվեց կանգնեցնել Իրանի եւ Էջմիածնի ճյուղերի հետագա զարգացումը, եւ պայքարում էինք Երեւանի արտադրամասի ճյուղի հետագա զարգացումը կանխելու համար:

Մարտի 23-ի ախտորոշումների վերլուծությունը, սակայն, ցույց է տալիս, որ Երեւանի արտադրամասի ճյուղը հնարավոր է մեզ համար անվերահսկելի զարգացում է ունեցել, քանի որ նոր դեպքեր ենք արձանագրել Երեւանի եւ Չարենցավանի այլ արտադրամասերում, ինչը մեզ հանգեցրեց եզրակացության, որ պետք է մեկ շաբաթով շատ ավելի խիստ սահմանափակումներ կիրառենք:

Ըստ այդմ, այսօրվանից առնվազն մեկ շաբաթով երկրում գործում են նոր սահմանափակումներ, ինչը նշանակում է, որ հազարավոր ձեռնարկությունների աշխատանքը դադարեցվելու է եւ թույլատրվում է միայն կենսական անհրաժեշտ կազմակերպությունների գործունեությունը եւ որ կարեւոր է մարդկանց միայն կենսական անհրաժեշտ տեղաշարժը: Փողոցում դուրս եկած մեր քաղաքացիները պետք է հստակ բացատրություն ունենան, թե ուր են գնում, եւ այդ բացատրությունը պետք է տեղավորվի «կենսական անհրաժեշտ» տեղաշարժի տրամաբանության մեջ:

Տեղաշարժի մեջ գտնվող մեր բոլոր քաղաքացիները պետք է ունենան անձը հաստատող փաստաթուղթ եւ պարետատունը կսահմանի քաղաքացու կողմից տեղաշարժի ձեւաթուղթ լրացնելու պարտադիր պայման:

Ինչ վերաբերվում է կենսական անհրաժեշտ համարվող գործունեությունների եւ տեղաշարժերի ցանկերին, Պարետատունը դրանք



հրապարակել է արդեն եւ հարկ չեմ համարում թվարկել բոլոր դեպքերը:

Նշեմ միայն, որ այսօրվանից առնվազն մեկ շաբաթով փակ են բոլոր ռեստորանները եւ սրճարանները, աշխատելու են խանութները, դեղատները, բանկերը եւ, ճիշտ է՝ քաղաքացիները հնարավորություն են ունենալու այցելել խանութ, դեղատուն եւ բանկեր, բայց եւ ուզում եմ բոլորիդ խնդրել, որ առավելագույնս օգտվեք օնլայն ծառայություններից՝ օնլայն գնումներ, օնլայն վճարումներ եւ օնլայն բանկինգ ծառայություններից:

**Սիրելի հայրենակիցներ,**

հասկանում եմ, որ շատերդ նման ծառայություններից օգտվելու փորձ չունեն, բայց սա շատ լավ առիթ է սովորել ժամանակակից աշխարհին հատուկ տեխնոլոգիական այս լուծումները, մանավանդ որ այդ ծառայությունները ձեր կյանքը միանշանակ կդարձնեն ավելի հարմարավետ ոչ միայն համաճարակի պայմաններում, այլեւ դրանից հետո:

Ուզում եմ նաեւ ներողություն խնդրել բոլորիցդ այս սահմանափակումների եւ պատճառվող անհարմարությունների համար: Հույս ունեմ, սակայն, որ բոլորիդ համար ակնհայտ է, որ սա արվում է հենց ձեր եւ հատկապես մեր ազգային գիտակցության հենասյուների՝ մեր ծնողների, տատիկների, պապիկների անվտանգությունն ապահովելու համար:

Նշեմ նաեւ, որ հենց այս նպատակով բոլոր այն թոշակառուները, ովքեր իրենց թոշակները կանխիկ են ստանում, այս ամիս կարիք չեն ունենա գնալ փոստային բաժանմունքներ եւ թոշակները կստանան առձեռն՝ իրենց բնակարաններում Հայփոստի շրջիկ խմբերի կողմից:

Նա սահմանվել է, որ բոլոր խանութները, դեղատները, բանկերն առավոտյան ժամը 10-ից 12-ը կսպասարկեն միայն 65-ից բարձր տարիք ունեցող քաղաքացիներին: Բոլոր մյուս քաղաքացիներին կոչ եմ անում այդ ժամերին խանութներից գնումներ չկատարել:

Իմ կոչն ու խնդրանք է բոլորիդ՝ մաքսիմալ լրջությամբ վերաբերվել այս իրավիճակին, սպառնալիքներին, սահմանափակումներին, տնից դուրս գալ միայն կենսական անհրաժեշտության դեպքում՝ ունենալով անձնագիր կամ նույնականացման քարտ, երկու հոգուց ավելի խմբերով չհավաքվել անգամ բակերում, զբոսայգիներում կամ թաղերում: Եվ ընդհանրապես, խստագույնս հետեւել պարետատան բոլոր հրահանգներին:

Տանը մնալու ընթացքում պահպանել հակահամաճարակային հիգիենայի բոլոր կանոնները եւ հետեւել առողջապահության նախարարության հրահանգներին:

**Սիրելի հայրենակիցներ,**

Արժույթի միջազգային հիմնադրամն արդեն իսկ արձանագրել է, որ 2020 թվականն անկումային է լինելու համաշխարհային տնտեսության համար: Որոշ գնահատականների համաձայն անկումն ավելի խորն է լինելու, քան անգամ 2008-09 թվականների տնտեսական ճգնաժամի ժամանակ: Հայաստանի պարագայում կանխատեսումներն այս պահի դրությամբ դրական են, բայց ակնհայտ է, որ մենք կորցնելու ենք աճի այն տեմպը, որը համատեղ աշխատանքի արդյունքում ձեւավորեցինք 2019 թվականին:

Բայց ինչպես ասել եմ նախկինում, այս վիճակը մենք ընկալում ենք ոչ թե որպես ողբերգություն, այլ որպես նոր հնարավորություն Համաշխարհային տնտեսության մեջ Հայաստանի տեղադիրքը փոխելու, տնտեսական հեղափոխության մեր օրակարգն ավելի արդյունավետ եւ կրկնապատիկ տեմպերով կյանքի կոչելու համար:

Աշխարհում համախառն ներքին արդյունքի 3 տրիլիոն դոլարանոց անկում է լինելու, այսինքն՝ համաշխարհային շուկայում այդքան տեղ ազատվելու է: Եվ մենք պետք է այսօրվանից մեզ տրամադրենք, որ այդ ազատված տեղի առնվազն 30 միլիարդ դոլարանոց հատվածը հենց Հայաստանը պետք է զբաղեցնի եւ այս խնդիրը պետք է լուծի առաջիկա հինգ տարում:

Սա նշանակում է, որ մենք խնդիր պետք է դնենք զբաղեցնել ազատվող շուկայի մեկ տոկոսը եւ ես հավատում եմ, որ կարող ենք դա անել:

Այսօր արդեն ամբողջ աշխարհն է հիացած հայ գործարարի տաղանդով, որոնց շնորհիվ կորոնավիրուսի ամենաճգնաժամային պահին Հայաստանը պարենային եւ լայն սպառման ապրանքների որեւէ դեֆիցիտ չունեցավ եւ չունի: Այսպիսի արդյունքով չեն կարող պարծենալ աշխարհի շատ ու շատ զարգացած երկրներ: Եվ սա մեր գործարարների, աշխատող հայ մարդու տաղանդի շնորհիվ:

Ուզում եմ արձանագրել, որ կառավարությունը հստակ քայլեր է մշակել մեր բիզնեսի մրցունակ եւ հեռանկարային հատվածին աջակցելու համար եւ այդպիսի առաջին փաթեթները կընդունվեն հինգշաբթի օրը կայանալիք կառավարության նիստում: Ընդհանուր առմամբ կառավարությունը շուրջ 150 միլիարդ դրամ է տրամադրելու՝ իրականում ոչ թե ճգնաժամային այս վիճակին դիմակայելու, այլ հետճգնաժամային աշխարհում մեր հաղթանակները նախապատրաստելու համար:

Կառավարության առաջիկա նիստում մենք կընդունենք նաեւ գյուղատնտեսության խթանման լայնածավալ ծրագիր: Ինչպես եւ խոստացել էի՝ բոլոր տեսակի նոր տրամադրվող գյուղատնտեսական վարկերի տոկոսները կառավարության կողմից կզրոյացվեն, ինչպես նաեւ առանձնահատուկ պայմաններ կստեղծվեն ռեալ աշխատող եւ նոր ձեւավորվող գյուղատնտեսական կոոպերատիվների համար:

Իմիջիայլոց, գյուղատնտեսական գործունեությունն այս օրերին չպետք է արգելակվի եւ ես կոչ եմ անում մեր բոլոր գյուղացիներին ակտիվորեն զբաղվել գարնան գյուղատնտեսական աշխատանքներով, որովհետեւ նաեւ պարետատան որոշմամբ գործունեության այդ տեսակը համարվել է կենսական:

Ասեմ նաեւ, որ կառավարության առաջիկա նիստում հատուկ փաթեթ կընդունվի գործող բիզնեսների լիկվիդայնության հնարավոր խնդիրները չեզոքացնելու եւ անհրաժեշտ լիկվիդայնությամբ ապահովելու, այդ թվում աշխատատեղերը պահպանելու եւ աշխատավարձերը վճարելու համար:

Կառավարությունը շարունակում է աշխատել սոցիալական աջակցության փաթեթի վրա, որի համար տրամադրելու ենք շուրջ 25 միլիարդ դրամ, առավել հասցեական եւ արդյունավետ ծախսելու ուղղությամբ եւ այս բոլոր ուղղություններով մեր աշխատանքները չեն դադարելու:

Մենք նորանոր գաղափարներ, փաթեթներ, ծրագրեր ենք ներդնելու ճգնաժամային այս վիճակում աշխատանքը եւ աշխատող մարդկանց աջակցելու նպատակով: Սա դուրս է եւ վեր է կասկածից:

Բայց բոլորիս ուշադրությունն ուզում եմ հրավիրել մեկ ուրիշ փաստի եւ մեկ ուրիշ հանգամանքի վրա: Տանը մնալու, մեկուսանալու եւ ինքնամեկուսանալու այս ժամանակները չափազանց հարմար են կարդալու, մտածելու, մեր երազած ապագան պլանավորելու, եւ այդ ապագան կյանքի կոչելու վճռականությամբ տոգորվելու համար:

Սա ինքնահայեցման, վատ սովորություններից ազատվելու ամենահարմար ժամանակն է, որովհետեւ հենց նման պահերին ենք հասկանում, թե ինչքան խոցելի ենք մենք, թե նման օրհասական պահերին մեզ ինչպիսի մարտահրավերների առաջ են կանգնեցնում անառողջ ապրելակերպը՝ անառողջ սննդակարգը, նստակյաց կյանքը, ավելորդ քաշը, ծխելը, ալկոհոլի չարաշահումը:

Կոչ եմ անում այս ժամանակահատվածն օգտագործել ծխելը թողնելու, ավելորդ քաշից ազատվելու, թեթեւ սննդի կուլտուրա որդեգրելու համար:

Կոչ եմ անում մեկուսացման այս առիթն օգտագործել առավոտյան վազքի կամ հեծանվավազքի կամ մարմնամարզության կուլտուրա որդեգրելու համար, իհարկե՝ այս ընթացքում պահպանելով առնվազն 10 մետր սոցիալական հեռավորություն եւ բացառելով թիմային մարզաձեւերը՝ առնվազն առաջիկա մեկ շաբաթվա ընթացքում: Պարետատունն իր որոշմամբ սահմանել է այսպիսի հնարավորություն:

Կոչ եմ անում այս ժամանակահատվածն օգտագործել մեր հայրենիքի, մեր հայրենակիցների նկատմամբ վերաբերմունքը դեպի լավը փոխելու համար եւ իսկապես ամեն ինչում փորձենք մեր հայրենիքին վերաբերվել որպես Օջախի, ժողովրդին որպես ընտանիքի, մեր հայրենակիցներին որպես ընտանիքի անդամների:

Կոչ եմ անում հնարավորինս կարդալ, լրացնել սեփական գիտելիքների պաշարը ու մտածել, մտածել ապագայի ու այդ ապագան մերը դարձնելու գործում մեզնից յուրաքանչյուրի անելիքի մասին. մեզնից յուրաքանչյուրը որպես անհատ եւ մենք որպես ժողովուրդ եւ պետություն պետք է ոչ թե ուրիշների խղճահարությունն ու կարեկցանքը փնտրենք, այլ հարգանքն ու ակնածանքը, հիացմունքն ու սերը, սա պիտի լինի մեզնից յուրաքանչյուրի նպատակը՝ թե անհատական եւ թե ազգային պետական մակարդակում, եւ սա մեր պարտքն է ինչպես նախնիների, այնպես էլ ապագա սերունդների առաջ, ու նույնիսկ ամենաօրհասական պահին մենք չպետք է մոռանանք, որ սերում ենք Հայկ նահապետից, եւ մեր անունն է հայ:

Եվ ինչպես դասականն էր ասում՝

***Բաբելոնն է եղել մեր ախոյանը՝ տե՛ս-***

***Անհետ կորել, անցել է - չար մշուշի պես:***

Կորոնավիրուսը նույնպես կանցնի չար մշուշի պես եւ կմնա այն ապագան, որը այսօր մենք կառուցում ենք մեր մտքերում, մեր ազգային-պետական հավաքական մտքում:

Այնպես որ՝ գլուխներդ բարձր, դուխներդ տեղը:

Սա առավելեւս վերաբերվում է մեր բժիշկներին, առողջապահական համակարգի այն աշխատողներին, ովքեր անձնուրաց կռիվ են տալիս վարակի դեմ: Շնորհակալություն եմ հայտնում մեր բոլոր բուժաշխատողներին, ՀՀ ոստիկանության, Ազգային անվտանգության ծառայության, Արտակարգ իրավիճակների նախարարության, պետական գերատեսչությունների, մասնավոր հատվածի այն աշխատակիցներին, ինչպես նաեւ բոլոր կամավորներին, ովքեր աջակցում են մեր բժիշկներին եւ իրենց նպաստն են բերում համաճարակի դեմ պայքարին:

Եվ, իհարկե, հատուկ շնորհակալություն մեր զինվորներին, սպաներին եւ գեներալներին, ովքեր այս խառը ժամանակներում աչալուրջ հսկում են մեր հայրենիքի անվտանգությունը:

Եվ, ի վերջո, խոսքս ուզում եմ ավարտել լավ լուրով. արդեն առողջացումով հիվանդանոցներից դուրս են գրվել նախկինում կորոնավիրուսով վարակված 4 քաղաքացիներ, ինչպես նաեւ մեկուսացումից տուն է վերադառնում 37 քաղաքացի: Մենք քայլ առ քայլ հաղթահարում ենք կորոնավիրուսը:

Առողջություն եմ մաղթում մեր վարակված բոլոր քաղաքացիներին, համբերություն եմ մաղթում բոլոր մեկուսացված եւ ինքնամեկուսացված մեր քաղաքացիներին, եւ համոզված եղեք՝ մենք կհաղթենք այս չարիքին:

Եվ ուրեմն,

***Կեցցե Ազատությունը,***

***Կեցցե Հայաստանի Հանրապետությունը,***

***Կեցցենք մենք եւ մեր երեխաները, որ ապրում են եւ ապրելու են Ազատ եւ Երջանիկ Հայաստանում:***

***Դուխով ժողովուրդ:***

**24 մարտի 2020 թ.**

# Հեռավար ուսուցումը՝ ժամանակի պահանջ



Մարինե Միրզոյան

էջ 1 ձեւերը, որոնք պայմանավորված են համացանցի առանձնահատկություններով եւ նրա հնարավորություններով:

Հեռավար ուսուցման ժամանակ տեղեկատվությունը սովորողներին ներկայացվում է տեխնոլոգիաների միջոցով՝ տպագրված նյութեր (ուսումնամեթոդական գրականություն եւ առաջադրանքների ժողովածուներ), նյութի առաքում համակարգչային ցանցերով (E-mail, համակարգչային կոնֆերանսներ), օնլայն ռեժիմով բանավեճեր՝ օգտագործելով համակարգչային ցանցերը (գրավոր հաղորդագրությունների փոխանակում), էլեկտրոնային նյութեր (համակարգչային ուսումնական միջոցներ, տվյալների բազա, գիտելիքների բանկ, էլեկտրոնային դասագրքեր), տեսալսողական նյութեր, հեռուստատեսային հաղորդումներ, հեռուստատեսային հաղորդումներ մալուխային հեռուստատեսությամբ տեսակոնֆերանսներ՝ երկկողմանի տեսակոնֆերանսներ՝ համակարգչային ցանցերի օգտագործմամբ (Zoom.us, Skype, Google Hangouts): Հեռավար ուսուցման գործընթացի ապահովման նպատակով տեղեկատվական ավանդական ռեսուրսների հետ մեկտեղ օգտագործվում են նաեւ հատուկ մասնագիտական դասագրքեր՝ մուլտիմեդիայի ուղեկցությամբ, էլեկտրոնային ուսումնամեթոդական ձեռնարկներ, էլեկտրոնային դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, մարզիչ-համակարգչային ծրագրեր, վիրտուալ լաբորատորիաներ, ստուգող-թեստավորող գործիքներ, ուսումնական տեսաֆիլմեր, ձայնագրություններ եւ այլն:

Հեռավար ուսուցման առավելություններից նշեմ նաեւ, որ կարելի է ուսուցումը կազմակերպել ավելի մեծ թվով սովորողների համար, բարձրացնել ուսուցման որակը ժամանակակից տեխնոլոգիաների, ծավալուն էլեկտրոնային գրադարանների օգտագործման միջոցով, սովորել եւ ստանալ դիպլոմ բարձրակարգ բուհերում՝ չհեռանալով հիմնական բնակության վայրից:

Հեռավար ուսուցումը տարբեր կրթական պահանջ ունեցողների համար ապահովում է մատչելիություն, հասանելիություն, մասնակցության հավասար հնարավորություն:

Համացանցի միջոցով հեռավար ուսուցման դեպքում սովորողն ինքն է ընտրում իր համար ամենահարմար ուսուցման ժամանակը, կարող է սովորել «իր սեփական արագությամբ» եւ իրեն հարմար ռեժիմով, կենտրոնանալ ուսումնական նյութի որոշակի մասերի վրա, ամեն օր ստուգել իր գիտելիքները, ավելի շատ համագործակցել դասավանդողի հետ, ավելի արագ ստանալ անհրաժեշտ տեղեկությունները:

Մտավախություն կա, որ ուսուցումը որեւէ անձի փոխարեն կարող է անցնել մեկ ուրիշը: Ուսուցման հեռավար ձեւերը չեն կարող համապատասխան հսկողություն ապահովել սովորողի կողմից ինքնուրույն կատարվող թեստային եւ ստուգողական աշխատանքների վրա (չէ՞ որ սովորողին հասանելի են համացանցի ընձեռած հնարավորությունները): Սակայն, ուսումնական գործընթացի արդյունավետության գրավականներից մեկը փոխադարձ վստահությունն է եւ սովորողի ինքնագիտակցությունը: Այդ խնդիրը մասնավորապես լուծվում է տեսախցիկների օգնությամբ, ինչը, սակայն, լիարժեք լուծում չէ:

Հեռավար ուսուցման մեթոդների օգտագործման ժամանակ փոխվում են նաեւ վերահսկողության մեթոդները: Գիտելիքների համակարգչային ստուգումը, համեմատած ստուգման ավանդական մեթոդների հետ, ունի զգալի առավելություններ: Դրանք են՝ անհատական մոտեցում է ցուցաբերվում սովորողների գիտելիքների ստուգման գործում (հաշվի է առնվում աշխատանքի կատարման արագությունը, տարբերակվում է աշխատանքի բարդության աստիճանը), բարձրանում է գնահատման անաչառության աստիճանը, սովորողը պարզ տեսնում է իր բոլոր թերացումները (գնահատական կարող է տրվել ոչ միայն աշխատանքն ավարտելուց հետո, այլեւ յուրաքանչյուր հարցի համար), գնահատման գործընթացի համար ծախսվում է նվազագույն ժամանակ, համակարգիչը ցույց է տալիս աշխատանքների կատարման արդյունքը՝ հաշվի առնելով թույլ տրված սխալները եւ ծախսված ժամանակը, համեմատում է տարբեր սովորողների կողմից նույն առաջադրանքի կատարման ցուցանիշները:

Հեռավար ուսուցման թերություններն են՝ բացակայում է սովորողի եւ դասավանդողի միջեւ անմիջական հաղորդակցումը, դժվար է ստեղծել ստեղծագործական մթնոլորտ սովորողների խմբում, իսկ երբ սովորողի կողքին չկա մեկը, ով կարող է ոգեւորել նրան, դա կարող է խիստ բացասաբար ազդել ուսուցման գործընթացի վրա, մի շարք գործնական հմտություններ կարելի է ձեռք բերել միայն իրականում (բայց ոչ վիրտուալ) գործնական եւ լաբորատոր աշխատանքներ կատարելով, հեռավար սովորելու ցանկություն ունեցողներից ոչ բոլորն ունեն անհատական համակարգիչ եւ համացանց, դժվար է ապահովել անընդհատ մուտք դեպի տեղեկատվական աղբյուրներ, ինչպես նաեւ տեխնիկական պատրաստվածություն՝ հեռավար ուսուցման միջոցների կիրառման համար, բարձր պահանջներ է ներկայացվում ուսուցման գործընթացի կազմակերպմանն ու կառավարմանը, բավական բարդ է ունկնդիրներին շահադրդելու խնդիրը, բավական տարողունակ է հեռավար ուսուցման համապատասխան դասընթացների մշակման գործընթացը, այստեղ մեծ դեր ունի համաշխարհային որոնողական ցանցը՝ Google-ը:

Տեխնիկական սահմանափակ հնարավորությունների եւ մոդեմների դանդաղ աշխատանքի պատճառով ձայնը, պատկերը եւ գրաֆիկան կարող են ուշացումով տեղ հասնել, թեպետ համապատասխան տեխնոլոգիաներն անընդհատ բարելավվում են:

Բացասական գործոն է նաեւ սոցիալական մեկուսացումը. հաղորդակցման տեխնոլոգիաները հանգեցնում են սովորողների մեկուսացման, սովորողները պատրաստ չեն լարված, արդյունավետ ինքնուրույն աշխատանքի, ինքնակազմակերպվելու, ի վիճակի չեն ինքնուրույն պլանավորելու աշխատանքը, բացակայում է ինքնակարգապահությունը:

Ներկա իրավիճակի մասին:

Պետական կառույցների կողմից գործադրվել են ջանքեր՝ ուսուցիչների ՏՀՏ գրագիտության նվազագույն շեմն ապահովելու, ՏՀՏ ռեսուրսներից օգտվելու եւ կիրառելու պատրաստվածության մակարդակի համար: Կազմակերպվել են վերապատրաստումներ պետական, ոչ պետական, հասարակական կազմակերպությունների կողմից:

Սկսած 2011 թվականից՝ ԿԱԻ նախաատեստացիոն վերապատրաստման դասընթացների ուսումնական պլաններում ներառվել է 12-ժամյա ուսումնական նյութ՝ ուսուցիչների ՏՀՏ գրագիտության մակարդակի նվազագույն շեմն ապահովելու նպատակադրմամբ: Ենթադրվում է, որ բոլոր ուսուցիչները նախնական գրագիտության մակարդակը հաղթահարել են (այն է՝ պարզագույն հմտությունների շրջանակում համակարգիչների գործնական հնարավորությունների կիրարկում): Այնուհետեւ 2015-ից վերապատրաստման 18-ժամյա ուսումնական ծրագրերում ՏՀՏ գրագիտության նկատմամբ ներկայացվող պահանջներն ավելի արդիական բնույթ են ստացել (ուսումնական թեմաներ տարբեր ծրագրերի, Smart էլեկտրոնային գրատախտակներով աշխատելու կարողությունների եւ հմտությունների ներառում, մուդլ (Moodle) հեռավար ուսուցման հարթակի գործիքաշարի ուսումնասիրում, learningapps էլեկտրոնային ռեսուրսների ստեղծում): Սակայն վերապատրաստողները հետադարձ կապի, մշտադիտարկման հնարավորություն չեն ունեցել:

Ներկայումս հայալեզու էլեկտրոնային կրթական ռեսուրսներ պարունակող առցանց կրթական միջավայրերից են՝

- «Դասարան» (www.dasaran.am),
- Դպրոցական դասագրքերի գրադարան (http://books.dshh.am/bookcase/hsma),
- «Իմ Դպրոց» (www.imdproc.am),
- «Ինֆորմատիկա բոլորի համար» կայք (www.informatika.am),
- «Հայերեն Վիքիպեդիա» ազատ հանրագիտարան (https://hy.wikipedia.org/),
- «Հայկական կրթական միջավայր» պորտալ եւ ենթակայքեր (www.armedu.am),
- «Հայկական Խան (Քան) ակադեմիա» (https://hy.khanacademy.org/),
- Մաթեմատիկայի ուսումնական կայք (www.mathnet.am),
- «Քառակուսի» (www.qarakusi.am),
- «ChessSchool (Շախմատի դպրոց) (https://chessschool.am/),
- «Learnpro» (www.learnpro.am),
- -https://lib.armedu.am

եւ այլն:

**Մարինե Միրզոյան**



## Կապանի բժշկական կենտրոնի ինֆեկցիոն բաժանմունքի աշխատողներին՝ առանձնահատուկ շնորհակալություն



Կապանի ԲԿ-ի ինֆեկցիոն բաժանմունքի աշխատողներն արդեն մի քանի օր է՝ տուն չեն գնում եւ հիվանդանոցում խնամում են կորոնավիրուսով հիվանդ մեր պացիենտին: Առանձնահատուկ շնորհակալություն ենք հայտնում ձեզ եւ գիտակցում ձեր աշխատանքի դժվարությունն ու լրջությունը: Հենց ձեր շնորհիվ է, որ մենք պատվով դուրս կգանք այս ամենից եւ կվերադառնանք բնականոն կյանքին. եւս մեկ անգամ շնորհակալություն ձեզ, ուժ ու եռանդ:

**Նարեկ Բաբայան**
**Սյունիքի փոխմարզպետ**
**24 մարտի 2020 թ.**

## Կենսաթոշակների եւ նպաստների տրամադրման գործընթացում ուշացումներ չեն լինի



Կենսաթոշակների եւ նպաստների տրամադրման բնականոն գործընթացն ապահովելու նպատակով՝ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության եւ «Հայփոստ» ՓԲԸ-ի միջեւ համաձայնություն է ձեռք բերվել այն մասին, որ ընկերության աշխատակիցներն անձամբ կայցելեն շահառուներին՝ կանխիկ եղանակով ստացվող կենսաթոշակները եւ նպաստները նրանց բնակության վայր հասցնելու նպատակով: «Հայփոստ»-ի բաժանմունք այցելելու անհրաժեշտություն չկա:

Քաղաքացիների տներ այցելող «Հայփոստ»-ի բոլոր աշխատակիցներն ապահովված կլինեն անհատական պաշտպանիչ միջոցներով՝ դիմակներով, ինչպես նաեւ ախտահանիչ միջոցներով:

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը եւս մեկ անգամ հորդորում է բոլոր քաղաքացիներին՝ զերծ մնալ «Հայփոստ»-ի բաժանմունքներ եւ այլ մարդաշատ վայրեր այցելելուց: ■



# Իսրայել Օրիի ծննդավայրը, փարիքը եւ ընտանիքը

Օրիի երեք հարազատների նահատակության փաստը նշվում է նաեւ մելիքների՝ Պետրոս Մեծին ուղղված 1699 թ. ապրիլի 29-ի դիմումի մեջ. *«Դարձեալ իմացնեմք քո ինքնակալ թագաւորիդ, ինչպես որ գրեր ենք ի մէջ թղթին, թէ այս պայծառ տունս պարոն Իսրայէլ Օռին որչափ լի չարչարանք է քաշեր, որ մենք ակնեբեւ տեսեալ եմք եւ ի պատմութիւնս գրեալ կա, որ Գ (երեք) մարդ նահատակեցաւ այս պայծառ տանէն մեր ժամանակաւն վասն քրիստոնէից համար. մենքլ դատաստանաւ տեսինք որ հնոց ի վաղէմէ իշխանաց զարմէ է, քան զամենքեանքս առաւել գերագոյն է ամենայն իրաց»*[33]:

Նահատակված այդ երեք անձնավորություններից Martin-ը՝ Մարտիրոսն է, Agajang-ը՝ Աղաջանը, իսկ Garagan-ը՝ կարող է լինի Քարախան կամ աղավաղված մի այլ անուն:

Գարեգին Հովսեփյանը որոնումներ է կատարել Մարտիրոս գյուղի շրջակայքում եղած գերեզմանատներում՝ պարզելու համար, թե չկա՞ն արդյոք այդ նահատակների գերեզմանները: Եվ նա, Մարտիրոսից ոչ հեռու, Օծոփ (Ածոփ կամ Ոծոփ) կոչվող վանքի արձանագրությունների մեջ գտել է Մարտիրոսի եւ Աղաջանի անունների հիշատակությունը:

Անհրաժեշտ ենք համարում բերել Օծոփի այդ արձանագրությունները:

Վանքի հարավային դռան ճակատին փորագրված է. *«Ես տ [է] ր Ղազարս ի գեղէն Մարտիրսէն, շինել ետու թումաիզ դուռս ս [ուր] բ Ա [ստա] ծածնիս վ [աս] ն ծնողաց իմոց պարոն Աղաճանին եւ կենակցին Սիրմարքին եւ եղբօրն իմոյ Վէլիճանին, կողակիցն Փարուն եւ կողակցին իմոյ Մարիանին թվ. ՌՃԻ (=1671)»*[34]:

Այդ արձանագրությունից ներքեւ. *«Ես Մարտիրոսեցի պարոն Լայէս ետո հոգոյ հաւրն իմոյ Մարտիրոսին, որ նա ո [ր] (հրատարակության մեջ «նա ո») ամէն զգործն կատարեաց, եւ մաւրն իմոյ Մուրասին: Է (=7) թուման տվի ս [ուր] բ Ա [ստա] ծած [նին]»*[35]:

Այդ արձանագրության կողքին. *«խաչս [յ] իշա [տա] կ է (հրատարակության մեջ՝ «իշակ՝ է») Լալին եւ կողակցին Կուլիխանին եւ որդոցն Ավզին, Հախնզարին, Մարտսին (=Մարտիրոսին), եւ եղբ[որ] ս իմ պարոն Էլիազին, որ տվաք Դ (=4) թուման ս [ուր] բ եկեղ [եցո] յս թվ. ՌՃԻ (=1671)»*[36]:

Եկեղեցու ներսից, հյուսիսային պատին.

*«Խ [ա] չս յ[ի] շ [ատա] կ է, Մուրադին եւ Մուրասին, Էլիաչին, Կուլիխանին, Լալին եւ կողակ [ի] ցն Հօնկյն (=հանգուցելոյն) Շահզատթումբ, Մարիանին մօրն, Մարտիրոսին ՌՃԻ (=1671)»*[37]:

Մատնացույց անելով այդ արձանագրությունները, Գարեգին Հովսեփյանը եզրակացնում է. *«Մ՛րդ, այս նահատակ Պռոշյաններից երկուսի անունը եւ մահվան ժամանակը նույնանում են մեր արձանագրություններից երկուսի հետ՝ «պարոն» Աղաճանի եւ «պարոն» Մարտիրոսի, մի զուգադիպություն, որ չպիտի վրիպի մեր ուշադրությունից: Այս հանգամանքը ստիպում է մեզ ճշմարտանման համարել, որ Օրիի հայրենիքը Մարտիրոս գյուղն է, այնտեղի «պարոնները»՝ Պռոշյանների մնացորդներ, որոնց պատկանում է եւ Օրին»*[38]:

Աշ. Հովհաննիսյանը համոզեցուցիչ չի գտնում Հովսեփյանի հայտնած կարծիքը Մարտիրոս գյուղը Օրիի ծննդավայրը լինելու մասին այն պատճառաբանությամբ, որ *«...չկա որեւէ փաստ, թե մինչեւ XVII դարը Վայոց ձորում շարունակվում էր Պռոշյանների սերունդը: Ապա չի երեւում, որ շիրիմագրերի Մարտիրոսը կամ Աղաջանը Պռոշյաններ էին կամ մելիքներ ու նահատակներ: Կամ որ այդ մարդիկ մահացել էին, ինչպես ասվում է Օրիի անմիջական նախնիների մասին՝ XVII դարի 60–80-ական թվականներին: Մելիք Մարտիրոսի մասին Օրիի թղթերում ասված է, թե նահատակվելուց հետո, «քրիստոնյաները սրբերի շարքը դասեցին նրան», այսինքն՝ սրբատեղի դարձրին նրա գերեզմանը: Հովսեփյանի նկարագրությունից չի երեւում նաեւ, թե Մարտիրոսի անուն կրող շիրմաքարը որեւէ հետք ունի նման պաշտամունքի» (ընդգծումները մերն են –Ա. Ա.)»*[39]:

Նույն առարկությունն արել է նաեւ Հ. Քյուրտյանը. *«Գարեգին Սրբազան Հովսեփյան,* – գրել է նա, – *իր Պռոշյանց նվիրված աշխատության մեջ կջանա այդ անգո մարտիրոսները նույնացնել Ոծոպի Մարտիրոս գյուղին մեջ գտնված արձանագրությանց՝ պարոն Աղաճանի եւ պարոն Մարտիրոսի հետ: Սովորական այդ անունները նույնացնել պարզապես անոնց նմանության համար, բնական է, անընդունելի է առանց որոշ եւ վերջնական տվյալներու: Հովսեփյան Սրբազանի հիշած Մարտիրոսը մեռած կհիշվի անթվական, մինչ Աղաճանը ողջ էր 1671-ին: Գարագանի մասին ոչ իսկ հիշատակության նշույլ հոն: Ըստ Օրիի՝ այս նահատակությունները կատարված էին 1699-ի ատենները: Ա՛լ ավելի զարմանալի է , որ բացարձակապես ո՛չ մեկ հիշատակություն կա Իսրայել Օրիի հոր՝ Իսրայել Պռոշի մասին, մեռած կամ ողջ...»*[40]:

Եթե դուրս հանելու լինենք Օրիի՝ Պռոշյանների ցեղից լինել-չլինելու վիճելի հարցը, ապա Աշ. Հովհաննիսյանի հիմնական առարկությունները կենտրոնանում են երեք հարցի շուրջը. ա) փաստեր չկան, որ Մարտիրոսը մահացած լինի XVII դարի 60–80-ական թթ., բ) չի հիշվում, որ Մարտիրոսը նահատակ է եղել, գ) բացակայում է Մարտիրոսի շիրմաքարը եւ հիմք չունենք ասելու, թե այն պաշտամունքի առարկա է եղել: Սրանց վրա պետք է ավելացնել Քյուրտյանի մի այլ առարկությունը, թե Գարագանի եւ Օրիի հոր մասին տեղեկություններ չկան:

Եթե մեզ հաջողվի նոր տվյալներ բերել խնդրո առարկա հարցի մասին, կարծում ենք, կարելի կլինի Օրիի ծննդավայրի վիճելի հարցը լուծված համարել:

Ուսումնասիրողներից շատերն են խոսել նահատակ Մարտիրոսի մասին, բայց նրանց բոլորի ուշադրությունից վրիպել է Մարտիրոսի շիրմաքարը, որը գտնվում է Մարտիրոս գյուղի արեւմտյան կողմում եղած գերեզմանատանը: Տապանաքարը օրորոցի ձեւ ունի, վրան կա չորս տողից բաղկացած արձանագրություն, որը հրատարակել է հայ վիմագրության երախտավոր Ս. Բարխուդարյանը: Այդ արձանագրությունը վերծանված է այսպես.

*«Այս է տապան Մարտիրո [ս] նահատակին*
*Նաեւ Լալ որդ [ոյն] եւ ամինեց [ուն],*
*Շին [եա] լ շիրիմ իւր ծնողին,*
*Թվ [ին] ՌՃԺ մեկին (=1662-ին,*
*Տ [է] ր Կ [ի] ր [ա] կ [ո] ս կ[ա] զմող սորին»*[41]:

Ինչպես տեսնում ենք, արձանագրությունը պատասխանում է վիճելի հարցերին: Պահանջվում էր, որ Մարտիրոսը շիրմաքար ունենար, ահա եւ նրա շիրմաքարը: Պահանջվում էր որ շիրմաքարը թվական ունենա, ահա եւ թվականը՝ 1662, որը լիովին համապատասխանում է Օրիի մատնացույց արած ժամանակին: Պահանջվում էր, որ շիրմաքարի վրա անպայման հիշվեր Մարտիրոսի նահատակ լինելը. որը եւ կատարված է՝ «Մարտիրոս նահատակ»:

Ինչպես երեւում է, Գ. Հովսեփյանն Օրիի երեք հարազատների հարցում ընկել է ճիշտ հետքերի վրա. Օծոփի վանքի վրա եղած երեք արձանագրություններն էլ կապված են նահատակ Մարտիրոսի եւ Աղաջանի անունների հետ: Երկրորդ արձանագրության մեջ հիշված Լալեն, որն իրեն Մարտիրոս գյուղից է համարում, Մարտիրոսի որդին է («Ես Մարտիրոսցի պարոն լալէս ետո [ւ] հոգոյ իմոյ Մարտիրոսին...»): Ուշագրավ է, որ տվյալ արձանագրության մեջ ե՛ւ Աղաջանը, ե՛ւ Մարտիրոսի որդին հիշված են իբրեւ «պարոններ», իսկ Մարտիրոսի համար նշվում է նաեւ, թե «գործն կատարեաց»: Խիստ հավանական է, որ «գործի կատարման» այդ ակնարկը անձնական, մասնակի գործի չի կարող վերաբերել, այլ՝ հասարակական կարեւոր ինչ-որ ձեռնարկի, իսկ թե ի՞նչ հասարակական գործ կարող էր լինել, այդ մենք գիտենք Օրիի հաղորդած տեղեկություններից:

Անբացատրելի էր մնացել Օրիի հաղորդած Garagan անսովոր անունը, որ չի հիշվում ո՛չ Օծոփի, եւ ո՛չ էլ Մարտիրոսի գերեզմանատանը եղած շիրմաքարի վրա: Լեոն կարծում է, որ այդ անունը եղած կլինի Կարախան[42]:

Մարտիրոսից ոչ հեռու, Հորատիս գյուղից երեք կիլոմետր հեռավորության վրա, կա մի ավերակ եկեղեցի, որի մուտքի մոտ փորագրված է հետեւյալ արձանագրությունը.

*«Շինեցի զեկեղեցիս թվ. ՌՃԻԸ (=1679):*
*Ես տ [է] ր Վարդանի որդի տ [է] ր Կիրակոս գրեցի:*
*Խաչս Յիշ [ատակ է] խաչն՝ տէր Աղաղարին մօրն»*[43]:

Մեր կարծիքով արձանագրող Կիրակոսը՝ Մարտիրոս նահատակի շիրմաքարի մեջ հիշվող Կիրակոսն է. այնտեղ ասել է. «Տէր Կիրակոս կազմող սորին», իսկ այստեղ՝ «Տէր Կիրակոս գրեցի»: Անհավանական չէ, որ այստեղ հիշվող «տէր Աղաղարը» լինի Օրիի հիշած «Garagan» -ը՝ «աղա» բառը, «Ղարա»-ից առաջ օգտագործած, թեեւ այդ անվիճելի չենք համարում:

Օրիի ծննդավայրի կապակցությամբ մնում է լուծել մի առեղծված եւս: Պֆալցի կուրֆյուրստին 1699 թ. սեպտեմբերի 22-ին Օրիի ներկայացրած զեկուցագրից երեւում է, որ նրա ծննդավայրի շրջանը գտնվել է Նախիջեւանի խանի գերիշխանության տակ. *«Նախիջեւան քաղաքը, – գրել է նա, – ուր մի խան կա, որ իր հետ ունի հարյուր մարդ, որովհետեւ նա թագավորության գլխավոր զորապետն է, եւ նա է, որ տիրում է մեր նահանգին (ընդգծումը մերն է – Ա. Ա.), եւ որ մահացու թշնամի է մեր ընտանիքին եւ ուրիշ քրիստոնյա իշխաններին, որոնց շատ անգթաբար սպանել է տալիս»*[44]:

Եթե օտարերկրացի հեղինակները կարող էին Հայաստանի մի շրջանը շփոթել մյուսի հետ՝ հավաստի տեղեկություններ չունենալով Օրիի ծննդավայրի մասին, ապա նման շփոթություն չէր կարող լինել իր՝ Օրիի մոտ. անկարելի է, որ նա այդ հարցում սխալ թույլ տար:

Հարց է առաջանում, եթե Օրիի ծննդավայրը գտնվել է Նախիջեւանի խանության մեջ, ապա այդ կարծիքը հակասության մեջ չի՞ մտնում արդյոք Օրիի հայրենիքը Վայոց ձորն ընդունելու իրողության հետ: Մեզ թվում է, որ ոչ, քանի որ XVII դարում Վայոց ձորը, իրոք, մտնում էր Նախիջեւանի խանության կազմի մեջ: Ավելորդ համարելով բերել մատենագրական կողմնակի տվյալներ, բավականանանք՝ միայն մատնացույց անելով 1765 թ. Էջմիածնում պաշտոնապես կազմված թեմերի ցուցակը, ուր Վայոց Ձորը տեղադրված է Նախիջեւանի խանության մեջ: Ըստ այդ ցուցակի, Նախիջեւանի խանության մեջ մտել են Աստապատը, Շահկերտը, Շոռոթը, Ղազանչին, Գազը, Նորաշինիկը, Շըխմահմուդը, Քուլթափը, Ածոպը (=Օծոփը), Ագուլիսը, Դաշտը, Ցղնան, Շամբը, Արարքը, Ջաղացտեղը, Ազատակը, Եղեգնաձորը, Վայոց ձորը եւ Օրդուվարը[45]:

**ԻՍՐԱՅԵԼ ՕՐԻ (1659-1711)** Հայ ազգային–ազատագրական շարժման գործիչ: Ծագում էր Պռոշյանների իշխանական տոհմից: Իսրայել Օրու գաղափարները մեծ ազդեցություն են ունեցել ժամանակի ազգային-ազատագրական պայքարի գաղափարների ձեւավորման հարցում: Օրին հիմնել է պայքարի ռուսական կողմնորոշումը:

Սյունիքում եւ Արցախում ունենալով գաղափարակիցներ՝ նա արմատավորեց Հայաստանի ազատագրության գաղափարը նրանց մեջ: Արդյունքում՝ իր մահից մեկ դար անց, Արեւելյան Հայաստանը միացվեց Ռուսական կայսրությանը:

# ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ըստ որում. Ղափանը եւ Սիսիանը, ըստ այդ ցուցակի, այլ թեմերի մեջ են մտած եղել: Իրավացի է Աշ. Հովհաննիսյանը, երբ վիճելով Ի. Պետրուշեւսկու հետ, հակառակ նրա հայտնած կարծիքի, գտնում է, որ «Շարուր-Դարալագյազը Նախիջեւանի (բայց ոչ Ղարաբաղի) խանության մեջ էին ոչ միայն Թահմազի ժամանակ, այլեւ ուշ` XVII դարում»[46]:

Համեմատաբար դյուրին է լուծվում Օրիի ծննդյան թվականը: Ըստ վավերագրական տվյալների, Էջմիածնի գաղտնի ժողովի ընտրած պատգամավորության Պոլիս մեկնած տարում Օրին եղել է քսան տարեկան[47]: Օրին Արեւմտյան Եվրոպա է մեկնել 1679 թ,. հետեւապես նա ծնված պիտի լինի 1659–1660 թթ.: Օրին, ըստ տեղեկությունների, մահացել է 1711 թ. 51 տարեկան հասակում: Այս հաշվով եւս Օրիի ծնունդը ընկնում է 1659–1660 թթ.:

Քյուրտյանը հենվել է Հեյգելի հաղորդած այն տեղեկության վրա, ըստ որի Օրին 1689 թ. իբրեւ թե քառասուն տարեկան է եղել: Հետեւապես ենթադրում է, որ Օրին պետք է ծնված լինի 1649 թ.[48], այլ խոսքով` տասը տարի ավելի վաղ, քան ընդունված է պատմագիտության մեջ: Հ. Քյուրտյանը, ինչպես մի կապակցությամբ նշել է Աշ. Հովհաննիսյանը, Հեյգելի բնագիրն անձամբ չի տեսել, այնտեղ նշված է ոչ թե 1689 թ., այլ` 1698–ը. տեղի է ունեցել միավոր 9–ի եւ տասնավոր 8–ի տեղաշարժ:

Կարծում ենք, որ հայագիտության մեջ բավարար լուծում է տվել Օրի անվան գործածությանը, որը հայկական ձեւ չունի: Գոյություն ունեցող այն կարծիքը, թե Եվրոպա ընկած հայ մարդիկ հաճախ քմահաճ ձեւով ազգանուն փոխելու սովորություն են ունեցել, եւ նման ուղիով է ընթացել նաեւ Օրին, ճիշտ համարել չի կարելի: Ըստ Հ. Աճառյանի հայտնած կարծիքի` Օրի անունը առաջացել է հայկական Ավրի կամ Եավրի անձնանունից[49], որը ֆրանսերեն տառադարձությամբ դարձել է Օրի. *«Թե իսկապես Իսրայելի որդի Եավրին կամ «Ավրին» Ֆրանսիայում էր դարձել «Իսրայել Օրի»* – գրել է Աշ. Հովհաննիսյանը, – *դրանում հեշտ է համոզվել, եթե նկատենք, որ Օրին ստորագրում է իր անունը միայն «Օռի» ձեւով, մատնելով հին ֆրանսերենի «ռ» հնչյունի արտասանության հետքը: Չպիտի, ի դեպ, տարօրինակ թվա, որ Իսրայել Օրի անվան մեջ հայրանունն անձնանունից առաջ է գրված. նույն այդ ձեւով Օրիի թղթերում հանդիպող «Եաւրի որդի Աղաջանը» թարգմանված տպագրված է ֆրանսերենում «Jauri Agadjan» ձեւով»*[50]:

Հիմք չունենք կարծելու, որ Օրին իր հայրենի գյուղում կարող էր ստացած լիներ կանոնավոր կրթություն: Սակայն աչքաբաց երիտասարդը Եվրոպայում իր թափառումների տարիներին կարողացել եւ տիրապետել է Եվրոպական մի քանի լեզուների` ֆրանսերենի, գերմաներենի, իտալերենի, լատիներենի, ինչպես եւ` նրանց գրությանը: Այն փաստարկը, որ եվրոպական լեզուներով գրված եւ մեզ հասած վավերագրերը գրված չեն Օրիի ձեռքով, դեռեւս ապացույց չէ, որ նա չէր տիրապետում այդ լեզուների գրությանը, որովհետեւ նշված թղթերը գրված են Օրիի քարտուղարների կողմից, բայց հայտնի է, որ այդ գրությունները քարտուղարները կազմել են Օրիի թելադրությամբ: Եվրոպական եւ ռուսական արքունիքներում վարած դիվանագիտական բանակցությունների ընթացքում Օրիի ցուցաբերած նիստուկացի կիրթ ձեւերը, խոսելու, տրամաբանելու բարձր կարողությունը անհերքելի ապացույց են նրա բարձր կուլտուրայի:

Օրին ֆրանսիայում ամուսնացած է եղել եւ ունեցել է երեխաներ: Դժբախտաբար նրա ընտանիքի մասին կցկտուր տեղեկություններ են հայտնի մեզ: Ըստ Կրուշինսկու տեղեկության, Օրին ամուսնացած է եղել Ֆրանսիայում նախքան զինվորական ծառայության մտնելը, իսկ այդ եղած պիտի լինի XVII դարի 80–ական թթ.: Օրին իր ընտանիքի մասին տեղեկություն է հայտնել 1703 թ. նոյեմբերի 15–ին կանցլեր Ֆ. Ա. Գոլովինին ներկայացրած գրության մեջ, նա խնդրել է թույլ տրվի իրեն Արեւմտյան Եվրոպա մեկնել երկու նպատակով` դեպի Հայաստան նախատեսող արշավանքի կապակցությամբ բանակցություններ վարելու Լեոպոլդ կայսեր եւ Պֆալցի կուրֆյուրստի հետ եւ ապա` տեսակցելու իր ընտանիքի հետ: Նա նշել է, որ մտադիր է իր երեխաներին բերել իր հետ ռուսական կրթության տալու նպատակով[51]:

Օրին ընտանիքի մասին հիշատակություն ունի նաեւ 1704 թ. սկզբներին Պֆալցի կուրֆյուրստին Մոսկվայից գրած նամակում, խոսելով իր նյութական դժվարությունների մասին, նա նշել է նաեւ ընտանիքի ծանր վիճակը. *«Ուղիղ յոթ տարի է (1698–1704),* – գրել է նա, – *աշխատել եմ եւ անդադար ճանապարհորդել: Այդ ընթացքում ես աներեւակայելի նեղություններ եմ կրել, ունեցվածքս վաճառել եմ, իմ խեղճ զավակներիս ոչինչ չեմ թողել (ընդգծումը մերն է–Ա. Ա.) եւ պարտքի տակ եմ ընկել»*[52]:

Ցարական արքունիքից արտասահման գնալու թույլտվություն ստանալուց հետո 1704 թ. փետրվարի 2–ին Օրին դիմել է Կանցլեր Ֆ. Ա. Գոլովինին եւ պատրաստակամություն է հայտնել իր հետ տանել ֆրանսերեն լեզու ուսումնասիրելու համար Ռուսաստանից արտասահման ուղարկելու գրագիրներին եւ խոստացել նրանց տեղավորել այն դպրոցում, ուր իր երեխաներն են սովորում եւ վերադարձին սեփական ծախսով նրանց ետ բերել[53]: Օրիի այս տեղեկությունից երեւում է, որ նրա երեխաները դպրոցական տարիք են ունեցել:

1706 թ., երբ Օրին վերադարձել է արտասահմանյան գործուղումից եւ պատրաստվել մեկնելու Պարսկաստան, հոկտեմբերի 39–ի խնդրագրում կրկին անդրադարձել է իր ընտանիքն արտասահմանից Ռուսաստան տեղափոխելու խնդրին: Նա գրել է. «Ես չեմ կարողացել իմ ուղեբեռը բերել Լեհաստանի վրայով եւ հարկադրված եմ եղել թողնել Հռոմեական կայսրության մեջ (այսինքն` Ավստրիայում –Ա. Ա.), իսկ այժմ մտադիր չեմ գնալ այնտեղ եւ այժմ Ձերդ ցարական Մեծության ողորմածությանն եմ ապավինում, որպեսզի իմ ունեցվածքը այստեղ բերեմ, ցանկանում եմ նաեւ երեխաներիս փոխադրել Ձերդ Մեծության երկիրը»[54]:

Դժբախտաբար, հակասական են տեղեկությունները Օրիի ընտանիքի բնակության վայրի մասին: Ըստ Օրիի մի տեղեկության, ինչպես եւ Մինաս վարդապետի հիշված զեկուցագրի, նրա ընտանիքի բնակավայրն է եղել Պֆալցի Դյուսելդորֆ քաղաքը: Կանցլեր Գոլովինին ուղարկած 1704 թ. փետրվարի 2–ի դիմումից հետեւում է, որ Օրիի ընտանիքը պիտի գտնված լիներ Ֆրանսիայում: Ըստ 1707 թ. փետրվարի 28–ին Պետրոս Մեծին Օրիի հղած գրության, նրա ընտանիքը գտնվել է Քյոլն քաղաքում[55]: Կրուշինսկին հայտնում է, որ Օրիի ընտանիքը եղել է Բրյուսել քաղաքում. «Անձամբ տեսել եմ Աստրախանում մի նամակ, որ Բրյուսելից գրել է Նրա որդին»[56]:

Երբ Մոսկվա եկող հայ առեւտրականները լուր հասցրին Մինաս վարդապետին, որ Օրին մահացել է, նրա գույքը բռնագրավվել եւ կողոպուտի է ենթարկվում, նա 1711 թ. նոյեմբերի 26–ին զեկուցագիր է ներկայացրել ցարական արքունիքի Դեսպանական վարչությանը եւ խնդրել թույլ տալ իրեն Աստրախան մեկնել` Օրիի գույքին տիրություն անելու եւ կողոպուտից փրկելու համար: Նա ցանկացել է Օրիի մնացած գույքով նրա պարտքերը փակել` նրա անպաշտպան մնացած ծառայողներին նյութական օգնություն հասցնել, իսկ մնացածը հանձնել ժառանգորդներին` կնոջն ու երեխաներին, որոնք, ըստ նրա խոսքի, ապրում են Հռենոսյան Պալագանի երկրամասում, Դյուսելդորֆ քաղաքում[57]:

Կրուշինսկու մի տեղեկությունից երեւում է, որ Մինաս վարդապետին թույլ են տվել գնալ Աստրախան, եւ նա այնտեղ կարողացել է կողոպուտից փրկել Օրիի անձնական իրերը եւ հանձնել նրա զավակներին. *«Մինաս վարդապետը, ինձ հետ լավածանոթ Մոսկվայից եւ լավ կաթոլիկ...»,* – գրել է Կրուշինսկին, – *եւ Օրիի մահից հետո նրա գլխավոր կտակակատարը, հանգուցյալ Պետր Ալեքսեեւիչի շնորհիվ կարողացավ ետ ստանալ Օրիի զավակի օգտին նրա անձնական իրերը, որոնք բռնագրավվել էին` համարելով պետական գանձարանի սեփականություն»*[58]:

Ովքե՞ր են եղել Օրիի զավակները եւ ի՞նչ եղան նրանք իրենց հոր մահվանից հետո, այդ մասին մեզ ոչինչ հայտնի չէ: Ըստ բուլղարահայ մտավորական Տ. Մարտիրոսյանի տեղեկության, Օրի ազգանունով տասնյակ ընտանիքներ են եղել Գերմանիայում եւ ունեցել են բարձր դիրք. *«Կըսվի թե Գերմանիո մեջ տասնյակ մը ընտանիքներ կան Օրի ազգանունով,* – գրել է նա, – *որոնք աչքառու դիրքեր կգրավեն առեւտրական եւ ազատական ասպարեզներու մեջ»: Ասիկա կբացատրվի անով, որ Իսրայել Օրիի մահվան թվականին, 1711–ին, անոր կինը (հավանական է գերմանուհի մը, ինչպես էր Խաչատուր Աբովյանի կինը) իր երկու զավակներով կբնակվեր Գերմանիո Հռենոսյան գավառների` Տյուսիլտորֆ քաղաքին մեջ: Անոր սերունդեն առաջ եկած պիտի ըլլան Գերմանիո մեջ ապրող Օրի ազգանունով այդ ընտանիքները»*[59]:


**Ծանոթագրություն**

33. Նույն տեղում, վավ. N 6, էջ 19:
34. Գ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք, էջ 253: Օծոփի այս եւ մյուս երկու արձանագրությունները հրատարակել է Ա. Այվազյանը, «Օծոփի եւ կուռքիի հուշարձանները» հոդվածում (տե՛ս «Պատմա–բանասիրական հանդես», 1976, N 2, էջ 257–265):
35. Գ. Հովսեփյան. նշվ. աշխ., էջ 253–254:
36. Նույն տեղում, էջ 254:
37. Նույն տեղում, էջ 254:
38. Նույն տեղում, էջ 274:
39. Աշ. Հովհաննիսյան, դրվագներ, գ. Բ, էջ 239:
40. Հ. Քյուրտյան. նշվ. աշխ., էջ 23–24:
41. «Դիվան հայ վիմագրության, պրակ III , էջ 190:
42. Լեո, Հայոց պատմություն, հատ. III, գ. II, էջ 21:
43. Հրատարակվում է առաջին անգամ:
44. Эзов, Сношения« վավ. N 9, էջ 33:
45. Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. N 9120, թ. 3ա, հմմտ. Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ, գ. Բ, էջ 236–237:
46. Աշ. Հովհաննիսյան, դրվագներ, գ. Բ, Էջ 237:
47. Эзов, Сношения« վավ. N 11, էջ 51:
48. Հ. Քյուրտյան, նշվ. աշխ., էջ 21–22:
49. Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Բ, էջ 304:
50. Աշ. Հովհաննիսյան, դրվագներ, գ. Բ, էջ 270:
51. Эзов, Сношения« վավ. N 109, էջ 176:
52. Նույն տեղում, վավ. N 120, էջ 193:
53. Ա. Գ. Աբրահամյան, Իսրայել Օրու եւ Մինաս վարդապետի նորահայտ վավերագրերը, «Էջմիածին», 1950, N 11–12, էջ 72:
54. Эзов, վավ. N 142, էջ 224:
55. Նույն տեղում, վավ. N 144, էջ 225:
56. Աշ. Հովհաննիսյան, դրվագներ, գ. Բ, էջ 592:
57. Эзов, վավ. N 183, էջ 284:
58. Աշ. Հովհաննիսյան, դրվագներ, գ. Բ, էջ 620:
59. Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, հատ. III, գ. II, ծանոթագրություններ, ծան. 14:


# Իսկապե՞ս Զրադաշտի ծննդավայրը Սյունիքն է, ավելի ստույգ` Որոտանի հովիտը

Մեզ հայտնի է իրանական ժողովուրդների նախաիսլամական կրոնի` զրադաշտականության «սուրբ» գիրքը` Ավեստան:

Այն ստեղծվել է մ.թ.ա. 1-ին հազարամյակի 1-ին կեսին` բանավոր ձեւով, հետագայում զգալի չափով վերափոխվել, լրացվել ու գրի է առնվել հին իրանական մի լեզվով, որ պայմանականորեն անվանվում է ավեստայի լեզու:

Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների ժամանակ (մ.թ.ա. 334-331) Ավեստան ոչնչացվել է:

Սասանյանների օրոք (III-VII դարեր) բանավոր ավանդությունների հիման վրա կազմվեց եւ օրինականացվեց Ավեստայի պահլավերեն (միջին պարսկերեն) տեքստը:

Ըստ Ավեստայի` զրադաշտականության հիմնադիրը համարվում է Զրադաշտը, Ավեստայի լեզվով` Զարատուշթրան:

Ընդունված տեսակետով` Զրադաշտն ապրել է մոտ մ.թ.ա. 630-553 թթ.:

Նրա ծննդավայրի հետ կապված տարբեր վարկածներ են եղել ու կան:

Նախկինում եւ հատկապես ներկայումս շրջանառվում է տեսակետ, որ Զրադաշտի ծննդավայրը Սյունիքն է, ավելի ստույգ` Որոտան գետի հովիտը, Որոտան գետի ջրով սնվող երկիրը...

Այդ մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդում Հովիկ Ներսիսյանի հեղինակած «Հայագիտական ուսումնասիրություններ» գիրքը (Երեւան, 2011):

Գրքում բազմիցս անդրադարձ է կատարվում այդ տեսակետին եւ դրան առնչվող հարցերին:

Ու ինչպես է հիմնավորում գրքի հեղինակը, որ Որոտան գետի անունն արծարծվում է Ավեստայում:

Բազմաթիվ պարզաբանումներից մեկը (էջ 440-441)` «Վանգուհի-Դաիթա բառը ստուգաբանել ենք հետեւյալ կերպ. Վանգուհի-Դաիթան բարդ բառ է` կազմված` 1-ին` վանգ-ուհի, պահլավերեն վանգ, հայերեն վանկ եւ պարսկերեն բանգ. բղավոց, գոռում, գոչյուն մեկնաբանությամբ, եւ 2-րդ` դաիթա, պահլավերեն դաիթիկ եւ դաթ, պարսկերեն դադ, գազան, վայրի կենդանի մեկնաբանությամբ: Այսպիսով, այդ բարդ բառ անունը նշանակում է` վայրագ, գազանային գոռում, գոչում ունեցող գետ: Հայերենում նման վայրի գազանային գոռոցը որոտ է կոչվում եւ, հետեւապես, այդ գետը, որ այդպես որոտալի ձայնով է հոսում` հայերենում պետք է կոչվի որոտան, եւ տեսնում ենք, թե ինչպես Հայաստանի Զանգեզուրի Բարգուշատ լեռներից սնվող Բարգուշատ գետը հենց այդպես էլ կոչվում է` Որոտան:

Այսպիսով, այն ավեստագետները, որոնք հայկական Արաքս գետն են նշում որպես Վանգուհի-Դաիթա, շփոթանքի մեջ են, քանզի բացի վերոնշյալ փաստարկման, մեր ձեռքի տակ եւս ունենք այդ գետի հարեւան տարածքում գտնվող տեղանունների ցանկ, որոնք ամրապնդում են նշված գետի տեղադրումը»:

Ըստ Ավեստայի` Վանգուհի-Դաիթան (Որոտանը) բարի գետ է:

Դրա համար է, որ Արարիչ Ահուրա Մազդան հենց Որոտանի գետափին է գումարել աստվածների (անվանի մահկանացուների) ժողով, երբ պետք էր պատրաստվել սպասվող սառցադաշտային ժամանակներին:

Եվ այդ կապակցությամբ Արարիչ Աստվածը Որոտանի գետափին սառցակալումից փրկվելու գործընթաց է սկսում:

Վերոնշյալ գրքի հեղինակն այնուհետեւ նշում է` «...Համաձայն...ավեստայական ասույթի` մարդկությունը, իմա` Ինդո-Իրանական ցեղերը, ներկա Հայաստանից (Որոտանի հովտից ) են չվել հարավ եւ ըստ պահլավական կրոնական գրականության ու ավեստայական ասույթների` Զրադաշտը...Վանգուհի-Դաիթա (Որոտան) գետի ջրով սնվող երկրում է ծնվել» (էջ 498):

Եվ այդ պատճառով` թե՛ երկրամասը, թե՛ գետը սուրբ են:

*Հ.Գ.*

*Ասում են` Ամենայն հայոց գուսան Աշոտը ծանոթ է եղել Ավեստային եւ Որոտան գետի ու մեր երկրամասի` հին աստվածներին ունեցած առնչություններին:*

*Նաեւ դրա արդյունքում է, ինչպես եւ Քրիստոնեության տարածման գործում Սյունիքի ունեցած կարեւոր դերը հաշվի առնելով, ծնվել չքնաղ ու այլեւս թեւավոր խոսքը` «...Սյունյաց հողը անարատ է/ Չարի սերմը բուն չի դնի, անարմատ է...»:*

**Սամվել Ալեքսանյան**

# Տարածվել են տեղաշարժի սահմանափակումներ ՀՀ քաղաքացիների համար

Պարետ Տիգրան Ավինյանի գլխավորությամբ տեղի է ունեցել պարետատան հերթական նիստը:

Նիստի ընթացքում Տիգրան Ավինյանը ասել է. «Ուզում եմ տեղեկացնել, որ յոթ օրվա ընթացքում միայն առաջնային անհրաժեշտության տեսակի ծառայությունները, խանութները ու դեղատները պետք է աշխատեն: Ուզում եմ նաեւ տեղեկացնել, որ ընդհանուր առմամբ մեր կողմից կիրառվող միջոցառումները մինչ այս փուլը եղել են արդյունավետ եւ յոթ օրվա ավելի խիստ ռեժիմին անցում կատարելու նպատակը լինելու է վերահսկելիությունը շարունակել պահել եւ շարունակել զարգացնել այն գործիքակազմը, որը մեզ թույլ կտա վարակի շղթաները հայտնաբերել ու կանխարգելել»:

Տիգրան Ավինյանը նաեւ տեղեկացրել է, որ տարածվելու են տեղաշարժի սահմանափակումներ ՀՀ քաղաքացիների համար եւ «յոթ օրվա ընթացքում պետք է հնարավորինս փորձենք պահպանել ինքնամեկուսացման ռեժիմը»:

«Այդ իսկ պատճառով, այս ցանկի հրապարակումից հետո մենք նոր մեխանիզմներ կներդնենք, որոնք մեզ թույլ կտան Հայաստանի Հանրապետությունով քաղաքացիների տեղաշարժը հնարավորինս սահմանափակել եւ մեր քաղաքացիներին կոչ կանենք մնալ ինքնամեկուսացված, որպեսզի մենք ունենանք ժամանակ արդիականացնելու մեր գործիքակազմը եւ շարունակելու արդյունավետ պայքարը կորոնավիրուսի դեմ», - հայտարարել է փոխվարչապետը:



Հավելված
Պարետի 2020 թ.
Մարտի 24-ի N 16 որոշման

ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՏԵՂԱՇԱՐԺՄԱՆ ԹԵՐԹԻԿ

"____ մարտի, 2020թ"

| | |
|---|---|
| Անուն, Ազգանուն, Հայրանուն | |
| Ելքի ժամը | |
| Ելքի հասցե | |
| Այցելության վայրի հասցե և անվանում | |
| Այցելության նպատակը | |
| Վերադարձի ակնկալվող ժամը | |

Ստորագրություն ____________

ՆՄՈՒՇ

Նիստի մասնակիցները մանրամասնորեն քննարկել են տնտեսական գործունեության սահմանափակումներին, կանխարգելիչ շարունակական քայլերին ու առաջիկա անելիքներին վերաբերող հարցեր:

**24 մայիսի 2020 թ.**

## Ոստիկանությունը զգուշացնում է

Հանրապետությունում նոր կորոնավիրուսային հիվանդության հետագա տարածումը սահմանափակելու, առկա դեպքերը նվազեցնելու, ինչպես եւ մարդկանց, հատկապես տարեցների առողջությունը չվտանգելու համար, Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը բնակչությանը հորդորում է՝

- խստագույնս սահմանափակել բնակարաններից դուրս գալը.
- բնակարաններից դուրս գալ բացառապես ծայրահեղ անհրաժեշտության դեպքում.
- խստագույնս պահպանել պարետի որոշումներով սահմանվող պահանջները, որոնց չկատարելը կառաջացնի օրենքով նախատեսված պատասխանատվություն:

**24.03.2020**



# Պարետը հրապարակեց արտակարգ դրության ժամանակ արգելված տնտեսական գործունեության տեսակները

Փոխվարչապետ, կորոնավիրուսի վարակի կապակցությամբ Հայաստանում հայտարարված արտակարգ դրության պարետ Տիգրան Ավինյանը հրապարակել է տնտեսական գործունեության այն տեսակները, որոնք արգելվելու են մարտի 22-ից մինչեւ արտակարգ դրության ավարտը:

«Կորոնավիրուսի հիվանդության դեմ պայքարի շրջանակներում մարտի 22-ից մինչեւ արտակարգ դրության ռեժիմի ավարտը Հայաստանի Հանրապետության տարածքում արգելվելու են տնտեսական գործունեության հետեւյալ տեսակները.

1. Առեւտրի կենտրոն՝ բացառությամբ սննդի, խմիչքների, ալկոհոլային խմիչքների, ծխախոտային արտադրության ապրանքների մանրածախ առեւտրի գործունեության,
2. Բարերի, գիշերային ակումբների, պարահրապարակների գործունեություն,
3. Կինոֆիլմերի ցուցադրում,
4. Խաղատներ,
5. Բուքմեյքերական եւ խաղագումարով գրազի կազմակերպման գործունեության սպասարկման գրասենյակներ», - ասված է Ավինյանի ֆեյսբուքյան գրառման մեջ:

«Պարետատունը բոլոր ջանքերը գործադրում է մեր ժողովրդի անվտանգությունն ապահովելու, հայ ազգի ուժերը մոբիլիզացնելու եւ բոլորիս առջեւ ծառացած մարտահարվերը հաղթահարելու համար», - վստահեցնում է պարետը:

***21 մարտի 2020 թ.***

# ՀՀ-ում փնտեսական գործունեության որոշ փեսակներ ժամանավոր արգելվել են

**Արփակարգ դրության ընթացքում Հայաստանի պարեփ Տիգրան Ավինյանի որոշմամբ երկրի ամբողջ փարածքում ժամանակավորապես՝ մինչեւ մարփի 31-ը ժամը 23:59-ը, արգելվում է փնփեսական գործունեության մի շարք փեսակներով զբաղվելը, փեղեկացնում է կառավարության կայքէջը:**

Բացառություն են կազմում հետեւյալ ցանկում տեղ գտած տեսակները.

1. ՀՀ «Առեւտրի եւ ծառայությունների մասին» 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ134-Ն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված առեւտրի իրականացման վայրերում գործող պարենային ապրանքների վաճառքի իրականացման առեւտրի օբյեկտները, դեղատները, գյուղատնտեսական արտադրանքի շուկաները:
2. ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 874-Ն հրամանի հավելվածով սահմանված՝ տնտեսական գործունեության հետեւյալ տեսակները.

1) Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն եւ ձկնորսություն
2) Հանքագործական արդյունաբերություն եւ բացահանքերի շահագործում
3) Սննդամթերքի արտադրություն
4) Խմիչքների արտադրություն
5) Սանիտարահիգիենիկ եւ կենցաղային նշանակության թղթե արտադրատեսակների արտադրություն
6) Հարստացած ուրանի արտադրություն
7) Օճառի եւ մաքրող, լվացող ու փայլեցնող միջոցների, օծանելիքի եւ կոսմետիկական միջոցների արտադրություն
8) Հիմնական դեղագործական արտադրանքի եւ պատրաստուկների արտադրություն
9) Հիմնական մետաղների արտադրություն
10) Զենքի եւ զինամթերքի արտադրություն
11) Ճառագայթահարող, էլեկտրաբժշկական եւ էլեկտրաբուժական սարքավորանքի արտադրություն
12) Հատուկ նշանակության այլ մեքենաների արտադրություն
13) Մարտական մեքենաների արտադրություն
14) Բժշկական եւ ատամնաբուժական գործիքների ու սարքերի արտադրություն
15) Ռենտգենյան, էլեկտրաբժշկական եւ էլեկտրաբուժական սարքավորանքի նորոգում եւ տեխնիկական սպասարկում
16) Էլեկտրականության, գազի, գոլորշու եւ լավորակ օդի մատակարարում
17) Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում եւ վերամշակում
18) Պայթեցման աշխատանքներ
19) Տարածքի նախապատրաստում հանքարդյունահանման աշխատանքների համար
20) Հետախուզական հորատում եւ գայլիկոնում
21) Էլեկտրական, ջրամատակարարման եւ այլ ճարտարագիտական համակարգերի հավաքակցման աշխատանքներ
22) Գյուղատնտեսական հումքի, կենդանի կենդանիների, մանածագործական հումքի եւ կիսապատրաստվածքների առեւտրով զբաղվող գործակալների գործունեություն
23) Վառելիքի, հանքաքարերի, մետաղների եւ արտադրական նշանակության քիմիական նյութերի առեւտրով զբաղվող գործակալների գործունեություն
24) Սննդամթերքի, խմիչքների եւ ծխախոտի առեւտրով զբաղվող գործակալների գործունեություն
25) Գյուղատնտեսական հումքի եւ կենդանի կենդանիների մեծածախ առեւտուր
26) Սննդամթերքի, խմիչքների եւ ծխախոտի մեծածախ առեւտուր
27) Օծանելիքի եւ կոսմետիկական միջոցների մեծածախ առեւտուր
28) Դեղագործական ապրանքների մեծածախ առեւտուր
29) Այլ մասնագիտացված մեծածախ առեւտուր
30) Մանրածախ առեւտուր ոչ մասնագիտացված խանութներում
31) Սննդամթերքի, խմիչքների եւ ծխախոտային արտադրատեսակների մանրածախ առեւտուր մասնագիտացված խանութներում
32) Շարժիչային վառելիքի մանրածախ առեւտուր մասնագիտացված խանութներում
33) Դեղերի մանրածախ առեւտուր դեղատներում
34) Բժշկական եւ օրթոպեդիկ արտադրատեսակների մանրածախ առեւտուր մասնագիտացված խանութներում
35) Կենցաղային հեղուկ վառելիքի, բալոններով գազի, ածխի եւ վառելափայտի մանրածախ առեւտուր մասնագիտացված խանութներում
36) Թաղման պարագաների մանրածախ առեւտուր մասնագիտացված խանութներում
37) Սննդամթերքի, խմիչքների եւ ծխախոտային արտադրատեսակների մանրածախ առեւտուր կրպակներում եւ շուկաներում
38) Ցամաքային տրանսպորտի գործունեություն եւ փոխադրում խողովակաշարերով
39) Օդային տրանսպորտի գործունեություն
40) Պահեստավորում եւ տրանսպորտային օժանդակ գործունեություն
41) Փոստային եւ սուրհանդակային գործունեություն
42) Հյուրանոցների եւ համանման բնակատեղերի տրամադրման ծառայություններ
43) Հեռուստառաղիոծրագրերի կազմում եւ հեռարձակում
44) Հեռահաղորդակցություն
45) Տեղեկատվական ծառայությունների մատուցում
46) ֆինանսական եւ ապահովագրական գործունեություն
47) Անասնաբուժական գործունեություն
48) Ավտոմեքենաների վարձույթ եւ լիզինգ
49) Անվտանգության ապահովում եւ հետաքննությունների կատարում
50) Սպասարկող օժանդակ ծառայությունների համալիր գործունեություն
51) Մաքրման աշխատանքներ
52) Պետական կառավարում եւ պաշտպանություն. պարտադիր սոցիալական ապահովություն
53) Առողջապահություն եւ բնակչության սոցիալական սպասարկում
54) Մանածագործական եւ մորթե արտադրատեսակների լվացում, մաքրում եւ չոր մաքրում
55) Թաղումների կազմակերպում եւ դրա հետ կապված ծառայություններ
56) Օտարերկրյա կազմակերպությունների գործունեություն:



# Մեղրիում սկսվել է ոռոգման ջրի մատակարարման փարեշրջանը



Նախորդ տարվա համեմատ այս գարունը փոքր-ինչ ուշացումով մտավ իր իրավունքների մեջ, բայցեւայնպես գարնան-գյուղատնտեսական աշխատանքների մեկնարկն է, ինչպես նաեւ ոռոգման ջրի մատակարարման: Այս վերջինի մասով զրույց ունեցանք «Սյունիք» ջրօգտագործողների ընկերության գործադիր տնօրեն Գոռ Բարսեղյանի հետ: Առաջին տեղեկությունը, որ իմացանք կառույցի ղեկավարից, այն էր, որ մարտի 25-ից նախապատրաստական աշխատանքներ են իրականացվում, որպեսզի ապրիլի 1-ից ջուր մատակարարվի Մեղրու տարածաշրջանի ջրօգտագործողներին: Մարզում հենց մեղրեցիներն են առաջինը ջուր ստանում` կապված Մեղրու շրջանի բնակլիմայական պայմաններով եւ դրանով պայմանավորված գարնան-գյուղատնտեսական աշխատանքների վաղ մեկնարկով: Տարածաշրջանում ոռոգելի է 486.5 հեկտար հող, որոնք հիմնականում գտնվում են Մեղրի եւ Ագարակ, Կարճեւան, Ալվանք, Շվանիձոր, Նռնաձոր բնակավայրերում, ջրօգտագործողների թիվը 1362 է: Այստեղ ավանդաբար զբաղվում են հողագործությամբ, ուստի ջրօգտագործողների թիվը միշտ կայուն է: Մի քանի տարի առաջ տարածաշրջանում ներդրվեց ոռոգման ջրի մատակարարման ինքնահոս եղանակ, բայց դա արդարացնում է այն դեպքում, երբ Մեղրի գետում ջուրը բավարար է, իսկ ահա ամռան ամիսներին, ինքնահոս ջրամատակարարումը չի ծառայում իր նպատակին (Մեղրի գետի սակավաջրության պատճառով), ուստի ոռոգման ջուրը մատակարարվում է Արաքս գետից: Վերջինիս տղմոտ եւ պղտոր ջուրը շարքից հանում է պոմպերի շարժիչները: Խնդիրը մեկ լուծում ունի` տարածաշրջանում կառուցել ջրամբար, որն անխափան կդարձնի ոռոգման ջրի մատակարարումը: Այդ մասին (ջրամբարի կառուցում) խոսվում է տարիներ ի վեր, բայց գործնականում ոչ մի արդյունք...

Ոռոգման ջրի մատակարարման ոլորտում քիչ խնդիրներ չեն կուտակվել, ո՞րն է նեղ վիճակից դուրս գալու ելքը. *«Ինչպես գումարներ ներդրվեցին ճանապարհաշինության մեջ, այնպես էլ ոռոգման ջրի մատակարարման համակարգում ներդրումներ պիտի լինեն, այլապես եղածն էլ կկորցնենք, ներդրումներ խողովակաշարերի, ջրամբարների նորոգման նպատակով: Ճշմարիտն ասած` խողովակաշարերն այլեւս նորոգման կարիք չունեն, որովհետեւ մաշվել են թե ներսից, թե դրսից: Նրանք արդեն փոխարինման ենթակա են: Երբ ՛խողովակաշարը կլոր տարին է աշխատում, նրանով ջուր է հոսում, այն ավելի ուշ է շարքից դուրս գալիս, քան այն դեպքում, ասենք, ձմռան ամիսներին խողովակաշարը, հարկադիր պարապուրդի է մատնվում»*, – բացատրում է մեր զրուցակիցը:

Մոտ մեկ տարի առաջ կառույցի ղեկավարությունը ստանձնած Գոռ Բարսեղյանին տխուր ժառանգություն էր բաժին հասել, խոսքը կուտակված պարտքերի մասին է: Ի՞նչ է փոխվել այդ ոլորտում. *«Երբ ստանձնեցի ընկերության ղեկավարությունը, աշխատավարձի մասով յոթ ամսվա պարտք էր կուտակվել, մոտ ապագայում աշխատավարձի պարտք չենք ունենա, խնդիրներ կան պահեստամասերի, վառելիքի ձեռք բերելու առումով, ընդհանրապես այդ խնդիրները քննարկել ենք ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի նորանշանակ նախագահ Կարեն Սարգսյանի հետ: Նոր ղեկավարի հետ սերտ համագործակցելով, նպատակ ունենք ընկերությունը հանել նեղ վիճակից»:*

Սյունիք ջրօգտագործողների ընկերությունը ոռոգման տարեշրջանում ունենում է 135 աշխատակից, միջին աշխատավարձը` 120.000 դրամ, սպասարկում է մոտ 1500 հա տարածություն, բաժանորդների թիվը` 5100: Ընկերությունն ունի 16 պոմպակայան, երկու խորքային հոր, յուրաքանչյուր պոմպակայանին կցված է երկուական ջրբաշխ:

Կար ժամանակ, երբ Կապանի տարածաշրջանում գործող Գեղի - Եղվարդ ջրատարը ջուրը հասցնում էր Ագարակ - Եղվարդ-Ուժանիս բնակավայրեր: 2005-06 թվականներին ոռոգման ջուր մղող պոմպը խափանվելուց հետո (գտնվում է Դիցմայրի բնակավայրում), այդ բնակավայրերն այլեւս ոռոգման ջուր չստացան...

*«Մեր հիմնական գործը մեր գյուղերը կանգուն պահելն է: Մենք էլ գյուղացուն կարողանում ենք օգտակար լինել ոռոգման ջուր տալով: Ամեն ինչ պիտի արվի, որ մարդ ամուր կանգնի հողին, իր բնակավայրը չլքի, գյուղը չդատարկվի: Մեր օրերում ամոթ բան է, երբ գյուղացին կարտոֆիլ է գնում կամ Բռնակոթից կարտոֆիլ է բերում եւ Կապան համայնքի բնակավայրերում վաճառում կամ փոխանակում է այլ գյուղմթերքի հետ: Դա նույնն է, ինչ գյուղացին լավաշ չի թխում, գյուղի թոնիրներից ծուխ չի բարձրանում, լավաշի բույրը չի տարածվում շուրջ բոլորը կամ գյուղատնտեսական նշանակության հողերը մնում են ամուլ: Գյուղաբնակ մարդը գոնե ինքն իրեն պիտի ապահովի: Եթե գյուղի թոնրում թխված լավաշ ու մածուն չուտես, համարիր, որ այդ գյուղը չկա»*, – զրույցն այսպես ամփոփեց Գոռ Բարսեղյանը:

**Վահրամ Օրբելյան**

# Գարնանացանը մեկնարկել է, բայց խնդիրներն էլ քիչ չեն



Աշխարհը համակած կորոնավիրուսը շատ ու շատ կենսական խնդիրներ հետին պլան է մղել: Բայց ժամանակն իր ընթացքով առաջ է գնում, եւ սերմը հողին պահ տալու ժամանակն է: Գարնան-գյուղատնտեսական աշխատանքների շրջանն է: Ժողովուրդը դիպուկ է ասել` ամեն ինչ նայում է ժամանակին, բայց ժամանակն ոչ մի բանի չի նայում: Դրա ընթացքի մասին տեղեկություններ իմանալու նպատակով զրույց ունեցանք Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության պետ Գագիկ Խաչատրյանի հետ:

Քանի որ գալիք բերքի ճակատագիրը պայմանավորված է նաեւ աշնանացանով, նախ հետաքրքրվեցինք, թե մարզում աշնանը որքա՞ն ցանք է կատարվել: Գ. Խաչատրյանի փոխանցմամբ` քանի որ բույսերի համար վտանգավոր ցրտերը լինում են ապրիլ ամսին, աշնանացանի վերջնական գույքագրում չի կատարվել, եւ ստույգ հնարավոր չէ ասել աշնանացանի վերջնական արդյունքների մասին:

Ինչ վերաբերում է գարնանացանին, արդեն այդ կատարվել է երկու հազար հեկտար, այդքան էլ կկատարվի, ավելի ստույգ` մարզի բարձրադիր գոտում նոր է սկսվել գարնանացանը: Սերմացուի հարցում սուր պահանջարկ կա գարնան ցորենի, կորնգանի եւ առվույտի, մյուս սերմացուներով` գարնանացան գարի, հաճար, վարսակ ապահովված են: Առաջին վերարտադրության գարու եւ հաճարի սերմերի կիլոգրամը 160-180 դրամ է` պայմանավորված որակով:

Ինչպես տեղեկացրեց Գ. Խաչատրյանը, պարարտանյութերի մի մասն աշնանն է ներկրվել, մոտ 250-300 տոննա, մոտովորապես 450-500 տոննայի պահանջարկ էլ ունեն, ազոտական պարարտանյութի մեկ պարկը վեց հազար 500 դրամ է, քանի որ ֆոսֆորական եւ կալիումական պարարտանյութերը թանկ հաճույք են, պարկը` 15 հազար դրամ, գյուղացիները ձեռնպահ են մնում դրանք օգտագործելուց: Մինչդեռ լիարժեք բերք ստանալու համար բույսին պետք է սնուցել այդ երեք պարարտանյութով:

Գ. Խաչատրյանը նաեւ նշեց, որ խնդիրներ են առաջացել վրացական արտադրության ազոտական պարարտանյութի մատակարարման հետ, պատվիրված վագոններն ուշանում են, զրույց է ունեցել մատակարարների հետ:



> *Գարնանացանի համար մարզ պետական ծրագրով դիզվառելիք չի ներկրվել: Բայց նաեւ դիզվառելիք հայթայթելու խնդիր չկա: Անցած տարվա համեմատ` դեռ մի բան էլ գներն իջեցրել են:*

Գարնանացանի համար մարզ պետական ծրագրով դիզվառելիք չի ներկրվել: Բայց նաեւ դիզվառելիք հայթայթելու խնդիր չկա: Անցած տարվա համեմատ` դեռ մի բան էլ գներն իջեցրել են:

*«Իսկ ո՞րն է այս պահի դրությամբ մարզի գյուղատնտեսության ամենանեղ օղակը» հարցին` «Ամբողջ գյուղատնտեսությունն է նեղ վիճակում»,* – պատասխանեց մարզի գյուղատնտեսության ոլորտի պատասխանատուն` ըստ ամենայնի նկատի ունենալով կորոնավիրուսի պատճառով ստեղծված ծանրագույն վիճակը:

**Վահրամ Օրբելյան**

Մարտի 27-ը թատրոնի միջազգային օրն է

# ԻՇԽԱՆ ՂԱՐԻԲՅԱՆ. «Աշնանը կնշենք Կապանի թատրոնի 85-ամյակը»

Հարցազրույց Կապանի Ալ. Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոնի գեղարվեստական ղեկավար Իշխան Ղարիբյանի հետ

> Ոչ ես, ոչ թատրոնի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Տիգրան Աթայանը մեր առջեւ չենք դնում խնդիր, որ ինքներս չենք կարող լուծել... որպեսզի վաղն ասենք, այս մեկն արել ենք, մյուսի համար մեր ուժը չի պատում:

– **Պարոն Ղարիբյան, ինչո՞ւ հատկապես դրամատուրգ Նիկոլայի, ինչո՞վ է գրավել Ձեզ իտալացի հեղինակի այդ ստեղծագործությունը:**

– Այդ ստեղծագործությանը հանդիպել եմ վեց-յոթ տարի առաջ, դա մի դերասանի մենախոսություն է, դերասանն էլ մի հավաքական կերպար է շրջապատի մարդկանց, ովքեր իրենց աչքի միջի գերանը չեն տեսնում, ուրիշի աչքի փուշն են տեսնում եւ իրենց դժբախտությունների պատճառը համարում յուրաքանչյուր ոքի, բացի իրենցից: Այն մի միջակ դերասանի բողոքն է առ այն, թե ինչու են բոլորը խաղում, բոլորը նկարահանվում: Այն, որ խնդիրը իրենով է պայմանավորված, ինքը չի նկատում: Այս ստեղծագործության անդրադառնալը «մեսիջ» է այն մարդկանց, ովքեր ոչինչ չեն անում, բայց անընդհատ բողոքում են ամեն ինչից: Մոնոներկայացման մեջ ընդգրկված է Արամ Հայրապետյանը, առաջարկն ինքն արեց, կարդալով պիեսը եւ հավանություն տալով:



– **Մի քանի օր առաջ եւս առաջնախաղ էր թատրոնում, մի քանի խոսք այդ մասին:**

– Այո, մանուկների եւ պատանիների համար բեմադրվեց Յարոսլավ Ստելմախի «Քաղցած է, կատաղած եւ շատ վտանգավոր» պիեսի հիմքի վրա ստեղծված ներկայացումը, որ բեմադրեց մեր թատրոնի դերասան Գրիշա Մարգարյանը: Ուսանողական տարիներին դեր եմ ունեցել այդ ներկայացման մեջ, տարիներ հետո Պատանի հանդիսատեսի թատրոնում բեմադրեցի այդ գործը, եւ քանի որ միշտ սիրել եմ այդ ստեղծագործությունը, որոշեցի Կապանի թատրոնի խաղացանկում էլ լինի, բայց ես չլինեմ բեմադրողը: Ասեմ, որ հետաքրքիր բեմականացում է ստացվել, բավականին գունեղ եւ երաժշտական, բեմական ձեւավորումը շատ հետաքրքիր ստացվեց: Ուշագրավ է, որ յուրաքանչյուրս իր լուման ունեցավ այդ բեմականացման մեջ:

– **Նաեւ թատրոնը օրերս հյուրախաղ ունեցավ, ինչպիսի՞ քաղաքականություն եք որդեգրել այդ խնդրում:**

– Որպես թատրոնի գեղարվեստական ղեկավար, շատ եմ կարեւորում, որ թատրոնը, հատկապես Կապանի թատրոնը (չեմ ուզում մարզային թատրոն ձեւակերպումն օգտագործել) հաճախ պիտի հյուրընկալի դրսի թատրոններին, եւ ինքն էլ հաճախ հյուրախաղերի գնա: Քանի որ հեռու ենք մայրաքաղաքից, պիտի սերտ լինի կապը, պիտի տեղյակ լինենք Երեւանի թատերական անցուդարձից, այնտեղից գան, տեսնեն՝ մեզ մոտ ինչ է կատարվում, ծանոթանան Կապանի հրաշալի հանդիսատեսին: Եվ իմ պաշտոնավարման առաջին օրերին կարեւորել եմ, թե առաջինը ո՞ր թատրոնը կայցելի Կապան եւ ի՞նչ բեմադրությամբ, քանզի առաջին տպավորությունն ամենաազդեցիկն է լինում: Ուստի նախընտրեցինք մոնոներկայացումը՝ «Քամելիազարդ տիկինը», որ բեմադրել էր Գալուստ Ներսիսյանը, ով քաջածանոթ է կապանցի հանդիսատեսին: Ինչպես երեւաց, վերջինս շատ ջերմությամբ ընդունեց բեմադրությունը: Մոտ ապագայում նախատեսում ենք հյուրախաղերի մեկնել. մայրաքաղաքից էլ հրավեր կա, Գավառից էլ: Մտածում ենք այնպես անել, որ այցելությունը ոչ մեր գործին խանգարի, ոչ՝ իրենց:

– **Որքանով տեղեկացանք հանրապետական մամուլից, ծրագրել եք ներկայացում բեմադրել Ապրիլյան պատերազմի կապանցի հերոսների մասին:**

– Ապրիլյան պատերազմում Կապանը երեք նահատակ ունեցավ: Աշխատում ենք չառանձնացնենք նրանց, հավաքական կերպար է լինելու, որովհետեւ Ապրիլյան պատերազմին ովքեր ընկան, էական չէ՝ կապանցի՞ են, թե՞ մի այլ վայրից: Պարզապես, որ նման բան է ձեռնարկվել, հարգանքի տուրք է Ապրիլյան պատերազմի զոհերի հիշատակին: Բեմադրիչը ես չեմ, կլինեմ ներկայացման ընդհանուր գեղարվեստական ղեկավարը, ներկայացումը կբեմադրի Պատանի հանդիսատեսի թատրոնի գեղարվեստական ղեկավար Դավիթ Հարությունյանը: Պիեսը գրելու ընտրությունն ընկավ դրամատուրգ Կարինե Խոդիկյանի վրա, բայց հետո պարզվեց, որ նա շատ զբաղված է, եւ թեման էլ մի քիչ «կանացիական» չէ: Որոշեցինք սցենարը վստահել դրամատուրգ Սուրեն Տավրոսին, ով նաեւ մասնակցել է Արցախյան պատերազմին, իր գործի գիտակ անձնավորություն: Նա արդեն եղել է Կապանում, հանդիպել զոհվածների հարազատներին: Բեմադրության ձեւավորումը կիրականացնի ՀՀ արվեստի վաստակավոր նկարիչ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Կարեն Գրիգորյանը՝ Երեւանի դրամատիկական թատրոնի գլխավոր նկարիչ: Ամեն ինչ անում ենք, որ բեմադրությունը ստացվի, կարծում ենք՝ այդպես էլ կլինի:

– **Այս մի հարցիս որոշ չափով պատասխանեցիք. Ձեր կարծիքը կապանցի հանդիսատեսի մասին:**

– Նախ՝ իմ կարծիքը կապանցիների մասին: Ինչպես Կապանի լեռներն ու բնությունն են մաքուր ու անաղարտ, այնպես էլ նրա մարդիկ: Իմ ամենասիրած քաղաքն է Կապանը: Եվ դա բնավ էլ նրանով չէ պայմանավորված, որ այժմ ղեկավարում եմ Կապանի թատրոնը: Եթե վաղը մի այլ տեղ աշխատեմ, միեւնույն է, ասելու եմ Կապանն իմ սիրած քաղաքն է: Քաղաքը լավն է մարդկանցով, այսինքն՝ մաքուր, ազնիվ, շիտակ: Գոնե այն մարդիկ, որ ինձ հանդիպել են, Փառք Աստծո, այդպիսին են: Եթե բեմադրության մեջ ինչ-որ բան՝ դերասանը, ձեւավորումը, բեմականացումը, նրանց դուր չի գալիս, անկեղծորեն նշում են: Ես էլ մեծապես ձգտում եմ, որ լավ առիթով հանդիպեմ հանդիսատեսին, խոսքը հաջողված բեմադրությունների մասին է:

> Ինչպես Կապանի լեռներն ու բնությունն են մաքուր ու անաղարտ, այնպես էլ նրա մարդիկ: Իմ ամենասիրած քաղաքն է Կապանը: Եվ դա բնավ էլ նրանով չէ պայմանավորված, որ այժմ ղեկավարում եմ Կապանի թատրոնը: Եթե վաղը մի այլ տեղ աշխատեմ, միեւնույն է, ասելու եմ Կապանն իմ սիրած քաղաքն է: Քաղաքը լավն է մարդկանցով, այսինքն՝ մաքուր, ազնիվ, շիտակ:

– **Արդեն փոքրիշատե ծանոթ եք Կապանի պետթատրոնի ներքին խոհանոցին: Ո՞րն է թատրոնի ամենանեղ օղակը:**

– Երիտասարդ դերասաններն են քիչ: Հարգանք տածելով ավագ սերնդի դերասանների հանդեպ, համոզմունքս այն է, որ թատրոնն անընդհատ պիտի երիտասարդանա:

– **Եվ ընդհանրապես կուզեինք առանձնացնել Կապանի թատրոնի երեք հիմնախնդիր:**

– Մեզ համար առաջնայինը շենքն է, որը պիտի ընդլայնվի: Դահլիճի ներկայիս հնարավորություններն այլեւս չեն բավարարում, մանավորապես բեմի:

– **Իսկ ո՞րն է ելքը:**

– Պիտի նոր շինարարություն սկսենք: Պատվիրել ենք, որ մեզ համար նախագծանախահաշվային փաստաթղթեր կազմեն:

– **Բայց իրատեսական խնդի՞ր է դա, քանզի թատրոնի շենքի վերակառուցում-ընդլայնումն ահագին ֆինանսական միջոցներ կպահանջի:**

– Դա իրատեսական խնդիր է եւ ապագայում շատ տեսանելի: Դրանից հետո կանցնենք թատրոնի տեխնիկական վերազինմանը, լուսային, ձայնային տնտեսությունը կարգի բերել: Սա երկրորդ հիմնախնդիրն է: Եվ երրորդ՝ հնարավորություններ պիտի ստեղծենք, որ երիտասարդ, կարող ուժերը մուտք գործեն թատրոն: Հանձն ենք առել, որ թատերական ստուդիա բացենք թատրոնում, մինչեւ որ հնարավորություն լինի թատերական ինստիտուտի կուրս բացենք Կապանում: Սա կենսական նշանակություն ունի յուրաքանչյուր թատրոնի համար: Երեւույթը ընտանիքի օրինակով բացատրեմ. եթե ընտանիքում նոր երեխաներ չծնվեն, այդ ընտանիքի կենսագրությունը մի օր կավարտվի: Շատ կարեւոր են եւ թատերական ստուդիան, եւ որեւէ ինստիտուտի մասնաճյուղի բացումը: Եթե վերջինս էլ չլինի, թատերական ստուդիայի միջոցով մեր ուժերով կդաստիարակենք, կփորձենք երիտասարդ կադրերին դարձնել թատրոնին պիտանի մարդիկ, դերասաններ: Իսկ դերասան լինելը պրակտիկ արվեստ է՝ ինչքան շատ աշխատես բեմի վրա, այնքան դյուրին կլինի հետագա բեմական գործունեության մեջ: Ինչեւէ, վերը նշվածն իրատեսական է: Ոչ ես, ոչ թատրոնի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Տիգրան Աթայանը մեր առջեւ չենք դնում խնդիր, որ ինքներս չենք կարող լուծել: Բնականաբար, շինարարության առումով, մեր ուժը հաստատ չի հերիքի ֆինանսի հետ կապված, բայց մյուս խնդիրները ձգտում ենք մեր ուժերով լուծել, որպեսզի վաղն ասենք, այս մեկն արել ենք, մյուսի համար մեր ուժը չի պատում: Այս մեկի համար աջակցենք, սա անենք: Ի վերջո թատրոնի ներկայիս վիճակը բարելավելու առաքելությամբ եմ ստանձնել գեղարվեստական ղեկավարի պաշտոնը:

– **Կա՞ մեկը, որ պատրաստակամություն է հայտնել օգնության ձեռք մեկնել Կապանի թատրոնին:**

– Այս պահի դրությամբ կդժվարանամ պատասխանել Ձեր հարցին: Ես նկատի ունեմ անհատներ, ոչ թե մարզպետարան կամ համայնքապետարան, չնայած թատրոնը մարզպետարանի ենթակայության ներքո է: Չեմ կարող պատասխանել այդ հարցին այն պարզ պատճառով, որ ոչ մեկին չենք դիմել: Դեռեւս փորձում ենք մեր ուժերով մեր հարցերը լուծել՝ թե մեր եկամուտների, թե մեր երեւակայության: Բայց, իհարկե, ինչպես ասում են՝ ախորժակն ուտելիս է բացվում, կգա ժամանակը, երբ կարիքը կգա դիմելու ինչ-որ մեկի օգնությանը, բայց հուսամ, որ երբ կգա այդ ժամանակը, այնքան գործ կունենանք կատարած, որ մարդիկ կտեսնեն ինչի վրա գումար ներդնեն, եւ ինչից ինչ կարելի է ստանալ:

– **Շատ հարցերի մասին խոսեցինք, ի՞նչ կավելացնեիք ասվածին:**

– Միայն կավելացնեմ, որ 2020-ը շատ կարեւոր է Կապանի դրամատիկական թատրոնի համար, նախեւառաջ վերը նշած Ապրիլյան պատերազմին նվիրված բեմադրության՝ հանդիսատեսի դատին հանձնելու առումով: Բացի այդ՝ զբաղված եմ մի բեմադրությամբ, որում ընդգրկված են լինելու բացառապես թատրոնի ավագ սերնդի դերասանները: Դա էլ իմ՝ բեմադրիչի եւ թատրոնի երիտասարդ գեղարվեստական ղեկավարի հարգանքի տուրքն է այն մարդկանց, ովքեր իրենց ուսերին են վերցրել թատրոնի բեռը եւ բերել-հասցրել մինչեւ մեր ժամանակները: Հետաքրքիր ներկայացում կստացվի: Եվ անպայման կնշենք մեր թատրոնի 85-ամյակը, որն ըստ ամենայնի կլինի հոկտեմբերին: Թե ինչպիսի ձեւաչափով, այս պահին չեմ կարող ասել, որովհետեւ ուզում եմ, որ շատ լավ լինի:

**Զրույցը՝ Վահրամ Օրբելյանի**

***Զրույցը կայացել է 28.02.2020 թ.***


Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:
Էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայական՝ 01Ս 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցե՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1000, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 25.03.2020թ.: